

Հ. ՄԿՐՏՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

(ԾՆԵԴՅԱՆ 120 ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

ՀԱՅԴԵՏՀՐԱՏ

891.99(09) [Նախնական] 16005

Մ-80 Մկրպույն, 2

Միջին Նախնական

20

Հ. ՄԿՐՏՁՅԱՆ

891.99.002 [նախնական]


15-80

ՅԱՆՎԱՐ Է 1961 թ.

A $\frac{\pi}{32153}$

16.005
ՄԻՔԱՅԵԼ ՆՈԼԲԱՆԴՅԱՆ

(Ծննդյան 120 ամյակի առիվ)



ՀԱՅԳԵՏԷՐԱՏ

ԵՐԵՎԱՆ

1949

А. МКРТЧЯН
МИКАЭЛ НАЛБАНДЯН

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949 г.



P. Langhorne & Co.



12-10-1915

11

«61 թիվ ուսուցիչներները մնացին մենակ և ինչպես երևում է լիակատար սլարովոյուն կրեցին: Իրականում հենց նրանք էին այդ էպոխայի մեծ գործիչները և որքան մենք ավելի ենք հեռանում այդ էպոխայից, այնքան ավելի պարզ է դառնում նրանց մեծությունը, այնքան՝ ավելի ակնհայտ՝ նրանց ժամանակակից լիբերալ ուսման տարրերի չնչինությունն ու սղորմելիությունը», — գրում է Լենինը¹:

Այդ մեծ ուսուցիչներներից է հայ հռչակավոր հրապարակախոս, ուսուցիչ-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը:

Նալբանդյանը ծնվել է 1829 թվի նոյեմբերի 14-ին, Նոր-Նախիջևանում, արհեստավոր ուստա Ղազար Նալբանդյանի բաղմանդամ ընտանիքում: Ուսումնասիր արհեստավորը ութ տարեկան հասակում որդուն ուղարկում է տիրացու Օղաենա Նղիշեի «դպրոցը»: «Բայց բարերախտաբար երկար չմնաց նա այս Նղիշեի մոտ, ըստ որում, կարճ միջոցում, տակավին մի երկու ամիս շանցած, այս սրամիտ, ուշիմ և աշխույժ երեխան այնպես վարժ կարդալ և գրել սովորեցավ, որ այնուհետև խեղճ վարժապետը շատ դժվարանում էր գոհացուցիչ սլատասխան տալ իր մանուկ աշակերտի հետաքրքրության և արած հարցվածներին», — գրում է Նալբանդյանի

¹ В. И. Ленин, Соч. т. XVII. стр. 100 (изд. 4-е).

ՄԱՆՈԹ.— Մեր այս աշխատության մեջ շարադրված է Միքայել Նալբանդյանի կյանքն ու գործունեությունը: Սակայն Նալբանդյանի կյանքն ու գործունեությունը գրեթե անկարելի է ընտարանել առանց նրա որոշ երկերի քննության: Ուստի, մենք հրապարակախոսի երկերը քննում ենք այնքանով, որքանով այդ անհրաժեշտ է մեր այդ նպատակի համար, թողնելով Միքայել Նալբանդյանի երկերի ուսումնասիրությունը մեկ ուրիշ անգամ:

Ժամանակակից և նրա առաջին կենսագիր Միքայել Տեր-Գրիգորյանը:

Նկատելով որդու բացառիկ ընդունակությունները՝ ուստա Ղազարը փոքրիկ Միքայելին տալիս է Գաբրիել Պատկանյանի (բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանի հոր) իր ժամանակի համար բավական բարեկարգ դպրոցը:

1845 թվին նորընտիր կաթողիկոս Ներսես Աշտարակեցին փակում է իր հակառակորդ Գաբրիել Պատկանյանի դպրոցը և Պատկանյանի փոխարեն Նոր-Նախիջևանում ուսուցիչ է կարգում Մկրտիչ Նզինյան վարժապետին: Միքայել Տեր-Գրիգորյանը պատմում է, որ Նալբանդյանը մի երկու տնգամ զնաց Նզինյանի դպրոցը, բայց երրորդ անգամին խալառ հրաժարվեց, ասելով. «ես ձեր սովորեցուցածը արդեն վաղուց սովորել եմ, և առավել մանրամասնաբար քան թի դուք դաս եք տալիս, ունիք նոր քան սովորեցնելու սովորեցուցեք, ես պատրաստ եմ ուրախությամբ սովորելու, բայց եթե չունիք, ապա ուրեմն խնդրեմ արձակեցեք ինձ»: Ժամանակակիցների վկայությամբ պատանի Միքայելը հրապարակալիս քննություն է տալիս, կատարելապես ապացուցում իր վարժապետի ազիտությունը և հեռանում է Նզինյանի դպրոցից:

Այսպիսով, ժամանակակիցների վկայությամբ, պատանի Նալբանդյանը կրթված և խելացի աշնավորություն համբավ էր վաչկում Նոր-Նախիջևանում: «Եթե նորա գիտություն վրա տվեցինք՝ քնածին քանքարը, ճարտար լեզուն և գրիչը, եթե նաև աչքի առաջ ունենանք Նախիջևանցոց մտավոր զարգացման ցած ոտախճանը, այն ժամանակ հասկանալի կլինի մեզ նորա ազդեցությունն արդեն այդ մատուղ հասակից Նախիջևանցոց հասարակության վերա», — գրում է Միքայել Տեր-Գրիգորյանը:

Միքայել Նալբանդյանի օգնությամբ ու խորհրդին էին դիմում նրա համաքաղաքացիները: Դպրոցի հետ կապված միջադեպի մանրամասնությունից պարզվում է, որ Ներսես Աշտարակեցին հալածանք է սկսում տակավին պատանի Նալբանդյանի դեմ: Ինչպես պատմում է Գաբրիել Պատկանյանը՝ ապստամբ դպրի «անվաչել» արարքի մասին Ներսես Աշտարակեցուն գրել էին թե՛ Մկրտիչ Նզինյան վարժապետը, թե՛ Նոր-Նախիջևանի քաղաքա-

զլուսի Հարությունն աղա խալիբյանը, որ Ներսեսի մերձավոր բարեկամներից մեկն էր:

Հալածանքի համար հիմք էր ծառայում նաև Միքայել Նալբանդյանի երկու նամակը, որ նա գրել էր 1846 թվին տիրացու Սարգսին (հետագայում Բարսեղ քահանա Պոպով) Միքայել դուպիր խազարյան Ուստայանց ստորագրությամբ: Տիրացու Սարգիսը հոգևոր իշխանությանը հաճոյանալու համար այդ նամակները հանձնել էր կաթողիկոսին: Իսկ նամակներում Միքայել Նալբանդյանը ծաղրում էր Նոր-Նախիջևանի աղաներին և Ներսես Աշտարակեցուն, որոնք փախել էին Գաբրիել Պատկանյանի բարեկարգ դպրոցը և փոխարենը բացել Մկրտիչ Նդենյան վարժապետի հոգևոր դպրոցը, որ միայն քահանաներ էր պատրաստելու: Այսպիսով պատանի Նալբանդյանն իր նամակներում ըստ էության պաշտպանում էր աշխարհիկ դպրության դատը: Այդ նույն մտայնությունն է տրտահատված նաև Միքայել Նալբանդյանի «Հիմարաց ուսման վրա ունեցած կարծիքը» սատիրական բռնաստեղծության մեջ:

Ամենայն հավանականությամբ այդ բռնաստեղծությունը գրված է հենց Գաբրիել Պատկանյանի դպրոցի փակման առթիվ և երեկ հենց այդ էլ Նալբանդյանը գրել է՝ գրատախտակի վրա իր յուրօրինակ քննության ժամանակ:

Միքայել Նալբանդյանի գրական-հասարակական գործունեությունն ուսվում է գրեթե պատահական հասակից: Նալբանդյանը միջամուխ եղավ այդ թվականներին Ռեմական հասույթների շուրջը եղած խալիբ-Հայրապետյան խմբակցությունների պայքարին և շատ շանցած դարձավ խալիբ-Ներսիսյան հակաաղայական հոսանքի ճանաչված պարագլուխը:

Ռեմական հասույթների խնդիրը բավական հին պատմություն ուներ: Տակավին 1842 թվին, Ներսես Աշտարակեցին, որ Բիսարաբիայի և Նոր-Նախիջևանի Ռեմական առաջնորդն էր, Հարություն աղա խալիբյանին էր հանձնել Նոր-Նախիջևանի եկեղեցական գումարները, որ տնօրինում էր խալիբը՝ «հաշվետու» լինելով միայն Ներսես Աշտարակեցուն:

Հայրապետյան խմբակցությունը հաշվետվություն էր պահանջում խալիբից: Խալիբը, որ յուրացրել էր այդ գումարների նշանակալից մասը, պատճառաբանելով, որ ինքը հաշվետու է

միայն կաթուղիկոսին, հրաժարվում էր հաշվետվությունից: Անշուշտ թեմական հասույթների շուրջը ծագած այդ բախումները քաղաքի ժողովրդական շերտերի և աղայական-հողերական դասի պայքարի արտահայտությունն էին: Նկեղեցական գոմարների խնդիրը պարզապես աղայական դասի չարաշահությունները մերկացնելու առիթ էր: Նվ այդ առիթը հիմնալի օգտագործում էր երիտասարդ Նալբանդյանը: Այդ է, որ չեն բմբռնել Միքայել Նալբանդյանի նախկին կենսագիրները, այդ թվում նաև Նովանդ Շահազիզը, որի խոստովանությամբ «...գոմարյան առարկա էր երկու կուսակցությանց մեջ և խաչի բաղադրադրությունը: Խաչի բաղադրությունը 12 տարի ինքնիշխան կերպով քաղաքագլխություն արած լինելով, ոչ մի հաշիվ չէր ներկայացրել հասարակության: Հայրապետյանը պահանջում էին, որ խաչի բաղադրությունը և արեւատեսության հաշիվը ներկայացնի հասարակության և վերադարձնի հասարակության այն հողը, որի վրա շինվածք կառուցանելով և տասը տարի օգտվելով նորանից, հողության օրենքի հիման վրա (десятилетняя давность) իրավունք էր համարել իրան բոլորովին տիրապետել նորան»:

Այսպիսով պայքարը տեղի է ունենում քաղաքակրթության և հողային սեփականությունների շուրջը: Չարաշահելով իրենց դիրքը՝ խաչի բաղադրության աղաները ապօրինի կերպով տիրացել էին քաղաքի լավագույն հողերին և Դոնի նավամատուցներին: Ներսիսյանը Նալբանդյանը մերկացնում էր քաղաքակրթության չարաշահությունները և դրա համար էլ Նոր-Նախիջևանի աղաների «աչքի փուշն» էր: Նվ խսկապես, Նալբանդյանի հակաաղայական տրամադրությունները երևում են տակավին նրա «Հիմարաց ուսման վրա ունեցած կարծիքը» անգրանիկ բանաստեղծություններից մեկի մեջ.

Ներկա դարուս ուսումնականը
Ինչ մեծ գիտեն, ինչ իշխան:

կշտամբում է սատիրական բանաստեղծության բացասական պերսոնաժը:

1847 թվին Միքայել Նալբանդյանը բարոսդարի պաշտոն է ստանձնում Բեսարաբիայի և Նոր-Նախիջևանի թեմական առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոս Վեհապետյանի մոտ: Ժամանա-

կախիցներին պատմելով՝ երիտասարդ քարտուղարը մեծ աղղկեցութեամբ ուներ առաջնորդի վրա, որ «առանց նորա մասնակցութեան և խորհրդին ոչ մի կարգադրութեան կամ տնօրինութեան չէր անում»¹:

Օգտագործելով իր նոր զիրքն ու աղղկեցութեանը՝ Միքայել Նալբանդյանը ավելի եռանդուն կերպով էր միջամտում Նոր-Նախիջևանի հասարակական գործերին և լուրջ մտահոգութեամբ էր պատճառում խալիբին ու նրա համախոհներին:

«Ահա այս իսկ պատճառով մի քանի նշանավոր անձինք Նախիջևանի մեջ սկսան անիրավաբար ամենայն կերպ հալածել Նալբանդյանին, զանգատներ, բողոքներ, անգամ գրեցին նորանից ներսես կաթողիկոսին, խնդրելով որ սա արժանավոր պատիժ տա այս խռովարար և ապստամբ տիրացուն»²:

Անշուշտ երիտասարդ Նալբանդյանի պայքարն ուղղված էր նաեւ ներսես Աշտարակեցու դեմ, որ անմասն չէր խալիբի շարաշահութուններից և հովանավորում էր խալիբին ու Նախիջևանի աղաներին: Աշտարակեցին «ապստամբ դարին» պատժելու ձևական հիմք ուներ: Այդ հիմքը նրա ձեռքն ընկած Միքայել Նալբանդյանի նամակներն էին, որոնց մեջ շոշափվում էր կաթողիկոսի անձնավորութունը: Ուստի ներսես Աշտարակեցին սինոդի միջոցով պահանջում է, որ Նոր-Նախիջևանի մագիստրատը քննի Նալբանդյանի գործը: Այսպիսով երիտասարդ Նալբանդյանի դատաստանը հանձնվում էր խալիբին: Սակայն Մատթևոս Վեհապետյանն անհետևանք է թողնում կաթողիկոսի և սինոդի հրամանը, որից հետո ներսես Աշտարակեցին հատուկ թղթով պահանջում է Բեսարաբիայի կոնսիստորիայից Միքայել Նալբանդյանին ուղարկել էջմիածին՝ անձամբ պատասխան տալու սինոդին նամակների մասին: Միքայել Նալբանդյանն իհարկե էջմիածին չի գնում համոզված լինելով, որ ներսես Աշտարակեցին դաժան դատաստան կտանի իր հետ և կաքսորի որևէ տեղ: Ուստի մի գրավոր բացատրութեամբ է ներկայացնում Մատթևոս Վեհապետյանին, որ գրում է, որ կաթողիկոսի դեմ ուղղված նամակներին

1 Միքայել Տեր-Դիգորյանց. «Մ. Նալբանդյանի համառոտ կենսագրությունը»:

2 Նույն տեղ, էջ 10:

հեղինակն ինքը չէ, որովհետեւ իր ազգանունը Ուստայանց չէ, այլ Նալբանդանց: Եւ վերջապէս եթէ անգամ այդ նամակներն իր գրածն էլ լինեն, ինքը ոչ մի պատասխանատուութիւն չի կրում, որովհետեւ այդ թվականին ինքը 16 տարեկան անշափահաս պատանի էր: Ապա հայտնում է, որ 1848 թվին հիվանդացել է խոլերայով, թուլութիւն ունի և այդպիսի երկար ուղևորութիւն չի կարող կատարել: Վերջապէս այդ ճանապարհորդութիւնը պահանջում է 400 ուրլի գումար, իսկ ինքն ստանում է ընդամենը 25 ուրլի ռոճիկ և անկարող է հոգալ իր ճանապարհածախսը: Մատթեոս Վեհապետյանը միանգամայն հիմնավոր է համարում Նալբանդյանի բացատրութիւնը և կախիկը կոսի կարգադրութիւնը չի կատարում: Այդ մերժումից հետո է, որ Ներսէս Աշտարակեցին 1853 թվին դիմում է փոխարքա Վորոնչովին, իսկ վերջինս պահանջում է Քիշնեի քաղաքապետից՝ ոստիկանութան միջոցով ձերբակալել «ապստամբ դպրին» և էտապով ուղարկել էջմիածին: Ինչպէս պատմում է Գաբրիէլ Պատկանյանը, Միքայէլ Նալբանդյանն այդ հրամանի մասին տեղեկանում է Քիշնեւում, որտեղից փախչում է Նոր-Նախիջևան և այնտեղից Մոսկւա: Մատթեոս Վեհապետյանի և Գաբրիէլ Պատկանյանի հանձնարարականներով Նալբանդյանը ներկայանում է Ստեփաննոս Նաղարչանին և Մոսկւայի կաղարչան ճեմարանի անօրեն կաղարչան եղբայրներին: Նալբանդյանին հայտնի էր կաղարչանների և Ներսէս Աշտարակեցու դժտութիւնը: Երկուստարդ Նալբանդյանն ջգտագործում է այդ ընդամութիւնը, պաշտպանութիւն որոնելով կաղարչան եղբայրների մոտ, որոնց ձեռնտու էր իհարկէ հովանավորել հալածական դպրին:

Միքայէլ Նալբանդյանն այնուհետեւ մեկնում է Պետերբուրգ, հաջող քննութիւն է տալիս համալսարանում, ստանում է հայոց լեզվի ուսուցչութեան իրաւունք և Ստեփաննոս Նաղարչանի միջնորդութեամբ նշանակւում է հայոց լեզվի ուսուցիչ կաղարչան ճեմարանի ստորին դասարաններում: Ճեմ երրորդ դասարանի աշակերտ էի,— պատմում է Նալբանդյանի աշակերտներից մեկը, — երբ ճեմարանի առաջին երեք դասարանի հայոց լեզվի ուսուցիչ Հովհաննիսյանը թուեց չուր պաշտօնը և լուր տարածվեցաւ, որ խաշատուր սղաչի առանձին հաճութեամբ այդ պաշտօնին նշանակվել է Նախիջևանցի Միքայէլ Նալբանդյանը: Մենք օրեց-

Եր սպասում էինք նորան, որովհետև նոր ուսուցիչը դեռ Պետեր-
բուրգումն էր: Մեկ օր էլ հանկարծ էմինի հետ դասարան մտավ
մի բարակ-բարակ, միջին հասակով երիտասարդ: Տեսուչը նո-
րան ծանոթացրեց մեզ հետ, հայտնեցով, որ այսուհետև նա
պետք է մեզ հայոց լեզվի դաս տա: Մեր առաջ կանգնած էր
Միքայել Նալբանդյանցը: Ճշմարիտը խոստովանած, նորա չոր
կազմվածքը, դեմքի խոժոռ դժագրությունը, սափրած ընչացքով
ու մորուքով երեսը և կարճ ֆրակը առաջին նվազ շատ էլ ախոր-
ժեղի տպավորություն չարին մեր վերա: Բայց այդ անախորժու-
թյունը շարունակվեցավ մինչև տեսչի նորան մեզ ծանոթացնե-
լու պաշտոնական ծիսակատարության վերջանալը, որովհետև
երբ որ տեսուչը դնաց և նա ամբլոն բարձրանալով, սկսավ յուր
առաջին դասը, նա կերպարանափոխվեցավ: Նորա առանց այն էլ
փայլուն աչքերը կրակով լցվեցան և երեսը մի այնպիսի դեղեցիկ
և գրավիչ արտահայտություն ստացավ, որ իսկույն հափշտակեց
մեր սիրտը և ընդմիշտ կապեց մեզ յուր հետ: Նա խոսում էր աղափ-
այն ժամանակվա մաքուր աշխարհաբարով, չէր կմկմում, չէր
կակաղում. նա բառերը հնչում էր մաքուր առողջանությանմբ և, որ
շլիավորն է, նախադասությունները շատ ճարտարությանմբ կո-
կում էր և միտքը հայտնելու համար բառեր ու սևեր չէր որոնում.
«Տղայք, թողնենք դրաբարը, այսուհետև մենք աշխարհաբար
պետք է սովորենք», — այս խոսքերով նա սկսավ յուր դասախո-
սությունը: Եվ մենք սկսանք աշխարհաբար սովորել: Էմինի «Ըն-
տիր հատուածքի» դրաբար հոգվածները մենք թարգմանում էինք
աշխարհաբար: Խոսում էր ինքը և մեզ էր խոսեցնում. կարգա-
ցածներին պատմական նյութը նա լրացնում էր հայոց պատմու-
թյունից ամբողջ դրուսների պատմելով. շատ անգամ էլ նյութից
հեռանալով, ուրիշ պատմություններ էր անում, որոնք բոլորը
ևս հայկական կյանքին վերաբերելով, շարժում էին մեր հետա-
քրքրությունը և մեծ բավականություն տալիս մեզ: Այսպես
անցնում էին օրեր ու շաբաթներ և մեր դասերն ավելի նմանում
էին ախորժեղի և հետաքրքիր դրույատություն, քան թե մեր սո-
վորական դասերին:

Ներսես Աշտարակեցին շարունակում է հետապնդել Միքայել
Նալբանդյանին, Նոր-Նախիջևանի մագիստրատի պահանջով, Մոս-
կվայի քաղաքապետի հրամանով, քաղաքամասի պետ Դեմիդովը

1854 թվի հունվարի 23-ին ձերբակալում է նալբանդյանին՝ էտապով էջմիածին ուղարկելու համար։ Միքայել նալբանդյանը բանտից ազատվում է Ստեփաննոս նաղարչյանի ջանքերով և կաղարչյանների միջամտությամբ։ Ոստիկանությունն ներկայացրելով է Միքայել նալբանդյանին հոգևոր կոչումից արձակելու թուղթը, որի հիման վրա նալբանդյանն, իրիև աշխարհական անձնավորություն, ալլևս կնթակա չէր հոգևոր իշխանության և ազատվում էր ներսես Աշտարակեցու հետապնդումներից։ Խիստ ուշագրավ է նալբանդյանի հոգևոր կոչումից ազատվելու այդ թղթի պատմությունը, որ զանազան վարիանտներով պատմում են Միքայել նալբանդյանի կենսագիրները։

Միքայել նալբանդյանը տակավին 1849 թ. մայիսի 10-ին դիմել էր կրոնական իշխանության՝ հոգևոր կոչումից ազատվելու համար։ Նույն թվի օգոստոսի 9-ին Մատթևոս Վեհապետյանին գրած իր խնդրագրում նալբանդյանը նորից է խնդրում միջնորդե՞լ էջմիածնի սինոդի առջև՝ իրեն հոգևոր կոչումից ազատելու համար, որովհետև ինքը հիվանդացել է խոլերայով և թուլություն ունի։ Անշուշտ հիվանդությունը լուր պատրվակ էր։ Սակայն ներսես Աշտարակեցին այդպես հեշտությամբ չէր կարող բաց թողնել իր դիմավոր հակառակորդին, սրին հետապնդում էր ամեն քայլափոխում։ Ուստի երկար ժամանակի պայտնիք էր մնում, թե նալբանդյանն ի՞նչ ճանապարհով է ստացել իր հոգևոր կոչումից ազատվելու թուղթը։

Ն. Շահազիզը պատմում է, որ Մատթևոս Վեհապետյանը նամակով հայտնում է գործի էությունն այն ժամանակվա աեղապահ Ղուկաս եպիսկոպոսին և խնդրում նպաստե՞լ խնդրի հաջողության։ Տեղապահը «մյուս շատ գործերի հետ ստորագրության է տալիս կաթողիկոսին և նալբանդյանի խնդրը, որ և ստորագրում է նուս առանց կարգալու»։ Իրականում Միքայել նալբանդյանն ազատվում է հոգևոր կոչումից Ստեփաննոս նաղարչյանի ջանքերով։ Նրա միջնորդությամբ է, որ կաղարչյանների փեսա, հայտնի շինովնիկ Դեյլանովը նալբանդյանի հոգևոր կոչումից արձակելու վկայականը ձեռք է բերում ուսական կառավարական մարմիններից։

Ներսես Աշտարակեցին, որ մտադիր էր «Միրիք բշե» Միքայել նալբանդյանին, սպառնում է կաղարչյաններին, թե կդիմի նիկողայ 1-ին, եթև նրանք շարունակեն հովանավորել «սպաստամբ

գլարին»։ Տեղի տալով Աշտարակեցու սպառնալիքներին՝ Լազարյանները 1854 թվին հեռացրին ճեմարանից Միքայել Նալբանդյանին։ Ամենայն հավանականությամբ Նալբանդյանը հենց 1854 թվին է գրել իր «Hy xopono» սատիրական բանաստեղծությունը, ուր արձագանքում է այդ հալածանքներին և ծաղրում հակառակորդների անզոր ջանքերը։

Հեռանալով Լազարյան ճեմարանից, Միքայել Նալբանդյանն յուզում է շարունակել իր ուսումը։ Ուստի 1854 թվի սեպտեմբերի 2-ին դիմում է ներկայացնում Մոսկվայի համալսարանի ռեկտորին և ընդունվում համալսարանի բժշկական ֆակուլտետում իրրե ադատ ունկնդիր։

Կասկածից վեր է, որ հռչակավոր հրապարակախոսն իր առաջին ռեկտուցիոն միրոսովյունն ստացավ Մոսկվայի համալսարանում, ուր դադանի տարածվում էր Գերցենի «Կոլոկոլ»-ը, և շափազանց ուժեղ էր Չերնիշևսկու «Հզոր քարոզիկ» (Անիմ) ազդեցությունը։ Համալսարանը ոչ միայն նպաստեց երիտասարդ Նալբանդյանի զարգացման ու մտահորիզոնի լայնացմանը, այլև վճռական դեր խաղաց հրապարակախոսի ռեկտուցիոն մտայնության կազմակերպման շրջանում։ Նալբանդյանը կապված էր ռեկտուցիոն տրամադրություններ ունեցող ռուս և լեհ ուսանողության հետ. նրա այդ շրջանի ընկերներից էր Ստանիսլավ Տխորժևսկին, որ հետագայում Գերցենի քաղաքական բարեկամներից ու 'գործակիցներից մեկն էր։ Միքայել Նալբանդյանը սիրով է հիշում ուսանողական տարիների մտերմական հավաքույթները։ Ներտասարդ Նալբանդյանը հեռու էր 50-ական թվականների հայ ուսանողական ազգայնական կազմակերպություններից, որոնք ստեղծվում էին հայ ուսանողությանը ռուսական ռեկտուցիոն շարժումներից հեռու պահելու համար։ Այդպիսի կազմակերպություն էր հայ ուսանողների հայտնի «Ժողովը»՝ ազգային պահպանողական դործիչ Կարապետ Նվյանի գլխավորությամբ։ «Ժողով»-ին մասնակցում էին Գր. Արծրունին, Ալ. Նրիցյանը, բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանը, հետագայում Ղազարոս Աղայանը, որին, ինչպես ինքն է խոստովանում, իր դեմոկրատական տրամադրությունների համար «մոլորյալների» շարքն էին դասում։ Այդ «մոլորյալներից» էր Միքայել Նալբանդյանը, որը ոչ միայն հեռու էր այդ կազմակերպությունից, այլև նրա

Հայառակորդների շարքումն էր և դատապարտում էր անա-
աղգայնական ուղղությունը, թեև «ժողով»-ի դասախոսների-
ցանկումն էր նրա մերձավոր բարեկամ Ստեփաննոս Նաղար-
յանը: Ունենալով քաղաքական-հասարակական գործչի մեծ
դերձանքներ, երիտասարդ Նալբանդյանը չէր կարող երկաթ-
ժամանակ «ձեռները ծալել» և նվիրվել միայն իր ուսումնական
պարապմունքներին բժշկական ֆեոդոկոստիտում:

Նվ ահա, ուսական ռեուլյուցիոն-դեմոկրատական շարժման
վերելքի տարիներին, երիտասարդ Նալբանդյանն սկսում է իր հրա-
պարակախոսական գործունեությունը: Ահա թե ինչ է գրում նա
1856 թ. մարտի 21-ի Ս. Գ. Սուլթանշահին ուղղած իր նամակում:

«Երկար ժամանակ է, որ ես և պարոն Նաղարյանցն ցանկա-
նում էինք դուրս տալ մի հայկական օրագիր, աշխարհաբար լեզ-
վով հասարակին հասկանալի: Երկուր ժամանակ այս խորհուրդը
մնացել էր մեր սրտումը բոլորովին անգործ, պատճառ որ զա-
նազան հանգամանք արդեւր էին լինում այս աղգասիրական
դործին: Այժմ տեսանելով այդ արդեւրութի հանգամանքների փո-
փոխությունը, տեսանելով մանավանդ, որ Զուխոնները մինչև ան-
գամ հրաման ստացան Ռուսաստանի մեջ օրագիր սպելու, կրկին
անգամ զորացավ մեր սրտի ցանկությունը, և սկսեցինք հետեւել
այս գործին, որ մեզ ևս թույլտվություն լինի տեղությունից տպել
ամենայն ամիս հայկական օրագիր Ռուսաստանի հայերի համար:
Այս խորհուրդով պարոն Նաղարյանցն ամսույս տասնիննից խնդրե-
ղից աղգային լուսավորության նախարարին, որի հետ միասին
ուղարկեց և տպելի օրագրի պայմանքը, որի համառոտ պարունա-
կությունն այս է: Առաջինը՝ որ այդ օրագիրը պիտի դուրս տա պ.
Նաղարյանցը, ամենայն ամիս ութսուտ ութն թերթ. (իմ ան-
վամբ խնդրել չէր կարելի, պատճառ որ ես համալսարանում լինե-
լով և բժշկությամբ պարապելով, չունիմ իրավունք հայտնի կերպով
պարապել այսպիս բանի, թեպետև առանձին գործաւից եմ
օրագրին, ըստ որում մի մարդի անկարելի է այդ գործը կատա-
րել): Երկրորդ՝ օրագիրը բաղկանում է չորս մասնից, այսինքն
Ուսումնական, Բանասիրական, Պատմական և Բնական հաս-
տիւններից, որոնք համաձայն հոգւածների պարունակությանը
պիտո է զարգարվեն գեղեցիկ պատկերներով և օրինակներով: Եր-
րորդ՝ օրագիրը պիտո է անվանվի «Հյուսիսային փայլողություն»:

(Северное сияние) և ամենայն ամսական տետրակի վերա պիտու է տալիս որպիս անունը, նույնպես այս փայլողութեան պատկերը»։

Այդ նույն նամակում Նալբանդյանը նշում է նաև «Հյուսիսափայլ»-ի քաղաքական ուղղութիւնն ու բնույթը։

«Մեր ցանկութիւնն այն է, որ կարողանանք ժողովրդին մօտեցնել փոքր ինչ դպրութեան հետ, նյութ և սնունդ դնել հայկական շոր ու ցամաք դպրութեան մեջ, և ինչպես մի կողմից լեզուն, մշակութիւն և նույն ինքնին դպրութեան հոգին և ուղղութիւնը որքան կարելի է շինենք ժողովրդական, ազատելով արեղայականութիւնից, որի մեջ մնացած է այժմ անտեր, անտերունջ»։

Ինչպես հիշատակում է Նալբանդյանը, մարտի 19-ին Ստեփաննոս Նաղարյանը դիմում է ուղարկում լուսավորութեան միախառնին՝ կցելով «Հյուսիսափայլ»-ի պրոսպեկտը և թույլտւութիւն է խնդրում ամսագրի հրատարակութեան համար։ Սակայն «Հյուսիսափայլի»-ի հրատարակութեան թույլտւութիւնն ստացվեց դիմումը ներկայացնելուց մի ամբողջ տարի հետո, 1857 թվի մարտի 17-ին։

«Սիրո ողջունով հայտնում եմ, որ մեր օրագրի թույլտւութիւնը դուրս եկած լինելով, հրատարակում ենք այժմ հայտարարութիւնը. ահա ուղարկում եմ քեզ մի օրինակ, որ կարգաս, հոգիդ փառավորվի ու ցնծաս»—ասում է Նալբանդյանը Գրիգոր Սալթիկյանին գրած իր 1857 թ. հունիսի 1-ի նամակում՝ ավելելով «Հյուսիսափայլ»-ի հրատարակութեան լուրը։ Այնուամենայնիւ «Հյուսիսափայլ»-ը լույս տեսավ միայն 1858 թվի հունվարին։

«Հյուսիսափայլ»-ի հետ դրեթե միաժամանակ ծնունդ առավ նաև արեւելահայ ռեակցիոն, ազգային-պահպանողական մամուլը։ 1858 թ. Թիֆլիսում հրատարակվեց «Մեղու Հայաստանի» թերթը, Մոսկվայում լույս տեսավ Մսեր Մսերյանի «Ճաքաղ»-ը։ Փարիզից Թեոդոսիա փոխադրվեց Գաբրիել Այվազովսկու «Մասյաց աղալինի»-ն։ Վերջապես Թիֆլիսում Մարկոս Աղաբեկյանի խմբագրութեամբ հրատարակվեց «Կռունկ հայոց աշխարհի» ամսագիրը։ Հայկական պարբերական մամուլի այդպիսի արագ զարգացումը ազդանշում էր դասակարգային պայքարի նոր էտապը հայ հասարակութեան կյանքում։ Անցյալ դարի 50—60-ական թվականներին ասպարեզ եկած հայ հասարակական հոսանքները համախմբված էին պարբերական մամուլի շուրջը։ «Մեղու»-ն,

«Ճաշար»-ը, «Մասյաց աղաւթին»-ն հայ ուսակցիոն կղերական հոսանքի օրդաններն էին, «Կոունկ»-ը աղղալին պահպանողականների ամսագիրն էր: «Հյուսիսափայլ»-ի շուրջը համախմբվեցին ինտելիգենցիայի առաջավոր շերտերը, ընդհանուր առաջադիմական ճակատ կազմակերպ հայ ուսակցիոն պահպանողական հոսանքի գեմ:

«Հյուսիսափայլ»-ի հոսանքի իսկական ոգին, մտքերի տիրապետողը Միքայել Նալբանդյանն էր: Նրա հռչակավոր բանաստեղծութունները, հոգվածները, հիշատակարանները «Հյուսիսափայլ»-ի իսկական դարդերն էին: Ամսի սկզբին ամեն բաժանորդ անհամբերությամբ սպասում էր «Հյուսիսափայլ»-ի նոր համարը դուրս գալուն, որ կարդա Կոմս Էմմանուելի (Նալբանդյան) հիշատակարանը կամ մյուս հոդվածները» — գրում է Միքայել Տեր-Գրիգորյանը: Ամսագիրը Նալբանդյանի կարող գրչի շնորհիվ դարձավ հայ հասարակական մտքի վերածնություն ամենափայլուն արտահայտիչը: Նալբանդյանն առաջին հայ հրապարակախոսն էր, որ բաղադրական կովի աղղանշան տվեց մեր հասարակական մտքի պատմության մեջ: «Ամենայն ժամանակ բաների նոր կարգը պատերազմ ունի հին կարգի հետ» — գրում է հրապարակախոսը:

«Մեր աղգի մեջ այժմ կան հայացքներ, կան ուղղություններ, կան ուրեմն և զրոշակներ, կա պատերազմ»: «Օրհնյալ է պատերազմը. թո՛ղ լինի նա հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ»: Պատերազմող կողմերը, Նալբանդյանի կարծիքով, տարբեր քաղաքական հոսանքներ էին՝ հակադիր շահերով, հետևաբար «համադրային հաշտություն, մի հոտ, մի հովիվ» սկզբունքը, որ քարոզում էին լիբերալները, անհնարին էր, իսկ պատերազմն անխուսափելի: Այդ անհաշտ հետևողական պայքարի մեջ իր ամբողջ փայլով հրկում է Նալբանդյանի իսկական ռադիկալիզմը: Այդ տեսակետից Նալբանդյանը Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի իսկական աշակերտն է:

Բայց դրաքննությունը փակում էր «Հյուսիսափայլ»-ի բերանը: Նալբանդյանի հոգվածները ենթարկվում էին կրկնակի գրաքննության: Բացի պաշտոնական ցենզորից, Նալբանդյանի մյուս գրաքննիչը ամսագրի պաշտոնական խմբագիրն էր: Ստեփաննոս Նազարյանին նկատի ունի հրապարակախոսը, որ իր հիշատակաբաններից մեկում գրում է. «Իմ հորեղբայրն իմ գլխին ցենզորի

նման մի բան է, շատ խիստ բարոյականութեան տեր մի մարդ է, ամենայն օր նայում է հիշատակարանիս, որ մի անպատշաճ բան չգրեմք: Մեկ ուրիշ հիշատակարանում անդրադառնալով նույն հարցին՝ նախանշանը գրում է. «Իսկ հիշատակարան ամեն բան ձգել, նույնպէս չեմ կարող, ըստ սրում, ինչպէս վաղօրոք հայտնել եմ ձեզ, պատվելիք ընթերցող, մի հորեղբայր ունեմ, որ միշտ քննում է իմ բոլոր աւանձնական գրածքը անգամ»: Հրատարակախոսի դժգոհութիւնը վկայում է, որ «Հյուսիսամիայլ»-ի խմբագրութեան ներսում եւ գոյութիւն ունեին քաղաքական տարածայնութիւններ:

«Հյուսիսամիայլ»-ի և «Մեղու»-ի միջև սկսված դրշապայքարի հիմնական հարցերից մեկը «նոր հայաստութիւնն» էր՝ աշխարհաբար լեզվի և աշխարհիկ կրթութեան խնդրը, որ հակայական պատմաքաղաքական. նշանակութիւն ուներ այդ պատմաշրջանի համար: Տակաւին 1858 թ. Ստ. Նաղարչանի «Հայկական լեզվի խորհուրդը» առաջնորդող հոդվածում «Հյուսիսամիայլ»-ը պաշտպանում էր աշխարհաբար լեզուն:

«Հայոց ազգի տունը, — գրում է Նաղարչանը, — կրկնում ենք խիստ շեշտելով, պիտի է շինվի նորա լեզվի շինութեամբ: Հայոց լեզու ասելով, այստեղ հասկանում ենք մեր հայ ժողովրդի կենդանի բարբառը, նորա բերանի խոսքը, այն լեզուն և ձևերը, որով մեր ժամանակի հայերը լավ ու վատ հասկացնում են միմյանց յուրյանց միտքը, դատողութիւնը և զգացողութիւնը: Հայոց լեզու ասելով իմանում ենք միայն աշխարհաբար լեզուն, որ կյանք ունի մեր ժամանակումը, և ոչ թէ ուսումնական, դրոց ասած լեզուն, որ այժմ մեռած է և կարող է միայն պիտանի լինել գիտնական հային, լեզվի նորաշինութեան համար, աշխարհաբար լեզվի թերութիւնքը լցուցանելու մայրենի աղբյուրներից»:

Պատասխանելով «Հյուսիսամիայլ»-ին՝ Ստ. Մանգինյանի «Մեղու Հայաստանի»-ն №25-ում գրում է, որ հայոց լեզուն ի վերջոյ սահմանված «նոյան լեզուն է», «Յաղամա սերած», ուստի և ենթակա չէ որեւէ փոփոխութեան: 1858 թ. «Մեղու»-ի № 33-ում նույն հոդվածագիր Վահան Ահարոնյանը դատապարտում էր Ստ. Նաղարչանին, որովհետեւ նա պնդում էր, թէ «ոչ մի ազգ եվրոպայում չի համարձակվիլ ասել, թէ յուր լեզուն մարդկութեան առաջին լեզուն է»:

A 32153
1100—2



Ազգային կրօնական «Մեղու»-ն Նաղարչանի այդ կարծիքը համարում էր «ազգային անպատվություն» հայերի համար, որովհետև հայր Չամչանի վկայությամբ հայոց լեզուն «Ադամա լեզուն էր», ուստի և մարդկության առաջին լեզուն: «Հյուսիսափայլ»-ի գիտական բանավեճին ազգային տերտերական «Մեղու»-ն կարող էր հակադրել միայն կրօնական ավանդություններ, Չամչանի նույնքան ավանդական պատմության վկայությունները և վերջապես պահպանողական, միամիտ ազգային սնապարծությունը: «Հյուսիսափայլ»-ի հրապարակախոսները միայն կարող էին ծաղրել այդ կրօնական ցնդաբանությունները: «Հյուսիսափայլ»-ի 1858 թ. № 4-ում «Մեղու»-ի դեմ տպագրված իր ուշագրավ հիշատակատրանում, իրեն հատուկ սարկաղմով Կոմս էմմանուելը ծաղրում էր «Մեղու»-ին:

«Ինչ որ դու ասում ես հայոց լեզվի համար,— գրում է Կոմս էմմանուելը,— ես ամաչում եմ պատասխանել, ամաչում եմ խոստովանել, որ այժմ ես կան հայերի մեջ մարդիկ, որ մոլորվելով կարծում են բոլորովին երեխայական սուտ պարծանքով, թե հայոց լեզուն Ադամի լեզուն է»:

Նալբանդյանի կածիքով «Մեղու»-ն մի «թշվառ հանդես» էր հայոց մատենագրության ասպարեզի մեջ: Սակայն ամենաուշագրավն այն է, որ հրապարակախոսը տեսնում է «Մեղու»-ի թիկունքում կանգնած խավարասերների «ճախնային ընկերությունը», ազգային պահպանողական հոսանքը, որի բերանն էր «Մեղու»-ն:

Հրապարակախոսը նկատում է, որ գրականության և լեզվի շուրջը ծավալվող բանավեճը քաղաքական պայքար է ռեակցիոն մամուլի և «Հյուսիսափայլ»-ի միջև: Իսկ «Մեղու»-ն ռեակցիոն օրգան է: Սակայն այդ կարևորագույն հարցում կատարյալ համերաշխություն գոյություն չունեն նաև «Հյուսիսափայլ»-ի խմբագրության ներսում: Սկզբունքորեն պաշտպանելով աշխարհաբարի դատը լեզվի և գրականության հարցերում, Ստ. Նաղարչանը և Միքայել Նալբանդյանը էապես տարբեր հայացքներ ունեն: «Եվ մեր հայոց գեղեցիկ լեզուն,— գրում է Ստ. Նաղարչանը,— պիտո է յուր փոքր ի շատի անարատ զրության մեջ առաջ դնա, մի ոտքը պահելով միշտ նախնական հիմքի վերա-

օրավուր լցուցանելով յուր պակասությունը հին լեզվի ճոխ գանձարանից»:

Տրամագծորին տարբեր տեսակետ ունի Նալբանդյանը: Իր «Հանդես նոր հայախոսության» կրիտիկայի մեջ, զնահատելով Ստ. Նազարյանի լեզվական առաջադիմությունը, Նալբանդյանը ցանկություն է հայտնում տեսնել առավել ժողովրդական նորա լեզուն»:

Հրապարակախոսի կարծիքով «շատ ավելի հեշտ էր» «գերեզմանից մեռելները հանել կենդանացնել, քան թե դրաբար ժանգոտած լեզվով նոր ժողովուրդ լուսավորել»:

Ինչպես տեսնում ենք, Միքայել Նալբանդյանի աշխարհաբար լեզվի տեսությունն արմատապես տարբերվում է Ստ. Նազարյանի տեսությունից: Եթե Նազարյանի կարծիքով աշխարհաբար լեզուն պիտի զարգանար «մի ոտքը պահելով միշտ հին նախնական հիմքի վերա», ապա ըստ Նալբանդյանի՝ նոր գրական լեզուն պիտի զարգանար կատարելապես նրա ժողովրդականացման ուղղությամբ ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խրպնելու:

Նալբանդյանն ավելի արմատական է այդ հարցում և սլաշտպանում է իսկական ժողովրդական լեզվի գաղափարը:

Բայց Նալբանդյանը չկատում է, որ նոր լեզվի և դեմոկրատական կուլտուրայի հաղթանակը նշանակում էր ժողովրդի վերանորոթյան հաղթանակը և եկեղեցու տիրապետության ու ֆեոդալիզմի մնացորդների ոչնչացումը: «Ոչինչ ազդ չի հասել լուսավորության վերին աստիճանին հոգևոր դաստիարակների ձեռքով» — գրում է հրապարակախոսը:

Իր հրապարակախոսության մեջ Նալբանդյանը փայլուն կերպով պաշտպանեց և հիմնավորեց «նոր հայախոսությունը»: Նա շարադրեց նաև նրա դիտական հիմունքները: Նալբանդյանն իրավամբ հայ արդի գրականության և լեզվի մեծագույն հիմնադիրներից մեկն է: Նրա հրապարակախոսության, արձակ երկերի և պոեզիայի հարուստ լեզվից ձնունդ առավ այժմյան մեր գրական լեզուն: «Հյուսիսատիայլ»-ը հսկայական դեր խաղաց աշխարհաբար լեզվի պաշտպանության ու զարգացման ասպարիզում: Եվ վրձնական հաղթանակ տարավ դրաբարի և գրաբարյանների դեմ: 50-ական թվականների վերջերին նույնիսկ հայ պահպանողական

մամուլը՝ «Մեղու»-ն, «Մասյաց աղապնի»-ն ստիպված էին հարմարվել «գարի ողուն», թեև գրաբարի կատաղի կողմնակիցներն էին 60-ական թվականներին աշխարհաբարն արդեն հայ գրականության և հրապարակախոսության պաշտոնական լեզուն էր։ Այս ասպարիզում ամենալճուկան զոտեմարտը մղեց Միքայել Նալբանդյանը։ Առաջնության դափնին այդ պայքարում պատկանում է Նալբանդյանին։ «Հյուսիսափայլ»-ի թե՛ պոեզիան, թե՛ արձակը կրում է գերազանցապես Միքայել Նալբանդյանի գրական լեզվի ազդեցությունը։

Ժողովրդական վտանգավոր արիքունի դեմ հանդես եկավ ողջ ռեակցիոն մամուլը։ «Մեղու»-ին շտապով միացավ նաև Գաբրիել Այվազովսկու «Մասյաց աղապնի»-ն։

Այվազովսկին երրորդ բաժանմունքի ուշադրությունը հրավիրում էր «Հյուսիսափայլ»-ի «շափը չճանչցող» «խեղճի» գործունեությանը, վրա։

Հայ հոգեորականության և Այվազովսկու դեմ մղած պայքարն իբրևանում իր սուր ծայրով ուղղված էր նաև ցարիզմի դեմ։

Ցարիզմի կամակատար հայ հոգեորականության հոլաժողության կոչերին Նալբանդյանը հակադրում էր ազգային ազատագրության և անկախության դադափարը։

— «Մի ազդություն, — դրում է Նալբանդյանը, — մասնավորություններից և եսականություններից ազատվելու համար, չէ պիտո ջնջել յուր ազդությունը. դրա հակառակ, հարկավոր է խոստովանել ամենայն ազդություն։ Ոչ մի ազդություն իրավունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազդություն, բայց այս բանը ստեղծ կըրելուն է մարդկության պատմության մեջ։ Այստեղ է ահա մասնավորության չարաչար գործադրությունը, այս բանի մեջ է եսականության անսուրբ տարրը։ Արդարությունը պահանջում է խոստովանել ամենայն ազդություն, այո՛, ամենայն ազդություն, որովհետև նոցա միավորություններից բաղկանում է ընդհանուր մարդկության կազմվածքը։ Մի ազդ, որ էությունանում է յուր ազդությունը, դուրս է ընկնում այն կազմվածքից որպես մի փտած անդամ, և հավիտենական կոկորդը անխնա կուլ է տալիս այդպիսի ազդությունը։ Այս պատճառով մարդկային սրտի համար մի ավելի տխուր բան չկա, քան թե տեսանել, որ մի ազդություն ընկնում էր և կործանվում էր ծանր հանգամանքների հարստահարու-

Յայն տակ — մի այլ ազգության ճնշողութենից: Բայց մի ան-
նկարագրելի վատարազողություն, մի սարսափելի տեսարան է,
եթև մի ազգի անդամք ինքյանք հրաժարվում են յուրյանց ազգու-
թենից և մտանելով մասնավորության կորստական դրոշակի տակ,
ընդհանուր մարդկային հարգ ու արժանավորություն տեսանել
համարում են մի մեծ, բայց օտար ազգի ազգության մեջ: Ինչ
ողորմելի փիլիսոփայություն, ինչ արտասովոր վարդապետու-
թյուն: Թո՛ղ ամենայն ազգ պահպանեն յուր ազգության կերպա-
րանքը, թո՛ղ ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգություն
մարդկեղեն աշխարհի մեջ. դոքա միայն զօրություն և հոգի են
տալիս ազգերի ընդհանուր աշխատությունը»:

Ազգությունների համերաշխության ջատագով Նալբանդյանը
կողմնակից է ազգերի հավասարության, պահանջում է «խոստո-
վանել (ճանաչել) ամենայն ազգություն»: Այդ քննադատությունն
սլոզոված էր ցարիզմի դեմ, որի կամակատարներն էին հայ հոգե-
րականությունը և աղայությունը: «Մխիթար և Մխիթարյանք» հոդ-
վածաշարքում մերկացնելով Մխիթարյան միաբանության կամ
հայ հոգևորականության ելրոպական այս հատվածը՝ Նալբանդյա-
նը նրա մատենագրական ու «լուսավորական» գործունեությունը
գիտում էր որպես ելրոպական ռեակցիայի արտահայտություն:

Հավանորեն դրաքննական արգելքների շնորհիվ, Նալբանդյա-
նի «Մխիթար և Մխիթարյանք» հոդվածը կիսատ է մնացել: Շու-
տով Նալբանդյանը հրապարակով հանդես եկավ Այվազովսկու
դեմ: Դրա շարժառիթը Նոր-Նախիջևանի եկեղեցական գումար-
ներն էին:

1858 թ. «Հյուսիսասիայ»-ի № 11-ում Այվազովսկու դեմ
հրապարակած իր հայտնի նամակում Նալբանդյանը մանրամաս-
նորեն շարադրում էր եկեղեցական գումարները կողոպտելու ամ-
բողջ պատմությունը: Եկեղեցական գումարների խնդիրը միայն
արտաքին շարժառիթ էր հայ ճիզվիտի շարաշահությունները մեր-
կացնելու համար: Միքայել Նալբանդյանին մտահոգում էր այն,
որ Այվազովսկին այդ գումարներով ապահովելով «Մասյաց աղան-
նի»-ն և դպրոց բանալով՝ ստեղծում էր իր գործունեության հա-
մար ամուր հենակետ:

Նալբանդյանի նամակը հսկայական աղմուկ բարձրացրեց:
Ռեակցիոն մամուլը միահամուռ արշավանք սկսեց Նալբանդյանի

դեմ: ՎՄեղու-ն «շարարարոտ նալբանդյանի» դեմ տպագրեց Ստեփան Բալասանյանի հոդվածը: Բայց Այվազովսկին և յուրայինները չբավարարվեցին միայն մամուլի գրչապայքարով: Այվազովսկին 1858 թ. դեկտեմբերին ներքին գործոց մինիստրությանը ներկայացնում է մի դանոս «Հյուսիսստիայլ»-ի և հատկապես Միքայել Նալբանդյանի դեմ:

Այվազովսկին խնդրում էր մինիստրին, ըստ հնարավորին շուտ արգելել «Հյուսիսստիայլ»-ը, իսկ «Նալբանդյանին, որն արդեն հայտնի է օտար դավանությունների դեպարտամենտում» որպես վնասակար ու անհանգիստ մարդ՝ ենթարկել արժանի պատժի, օրենքի ուղջ խստությամբ, որպես հանցավոր իր դավանակիցների համերաշխությունը խռովելու դիտավորության և մեր համայնքին խիստ պատվարժան կրոնավոր ու աշխարհիկ անձանց անձնապես վիրավորելու մեջ»:

Այվազովսկու դանոսը և հայ հոգևորականության դիմոմենտը հանգեցին այն բանին, որ կառավարական հատուկ կարգադրությամբ պաշտոնապես արգելվում էր հոդվածներ տպագրել հայ հոգևորականության դեմ:

ՎՄեղու Հայաստանի»-ն և ՎՄասյաց աղավնի»-ն հասել էին իրենց նպատակին: Նրանք ցեխ էին շպրտում «Հյուսիսստիայլ»-ի վրա, լրտեսական նպատակներով հոդվածներ էին գրում, իսկ գրաքննությունը փակում էր «Հյուսիսստիայլ»-ի բերանը, — գրում է Ստեփաննոս Նազարյանն իր 1859 թ. համակնիքից մեկում: Միքայել Նալբանդյանը զրկված էր հոդվածներ գրելու հնարավորությունից: Սակայն հրապարակախոսն իր փայլուն «Հիշատակարաններ»-ով, եղեպոսյան լեզվով շա՛նթում էր հակառակորդներին: Այսօր իսկ մեծ հիացմունքով են կարդացվում հիշատակարանները, որոնք ամսական տեսությունների ձևով տպագրվում էին «Հյուսիսստիայլ»-ում: Գեղարվեստական կենդանի դիալոգներով, աշխարհությունների միջոցով հրապարակախոսը թեթև գրչով ստեղծում էր հիանալի ծաղրանկարներ: Նալբանդյանի ստեղծած պորտրեներն անմոռաց են մնացել:

Ռեդուցիոն լուսավորիչը գրեթե նույն հաջողությամբ իր բախալը փորձել է գրական բոլոր ժանրերում, և ո՛ր ժանրով էլ որ գրել է, մի ամբողջ պատմաշրջան է բացել հայ կուլտուրայի պատմության մեջ: Հռչակավոր հրապարակախոսը միաժամանակ վիպա-

սան և խոշոր բանաստեղծ է: Սակայն դրական բոլոր ժանրերի մեջ Նալբանդյանը նախ և առաջ ռեռուցիոններ-դեմոկրատ է: Նալբանդյանի թե՛ արձակը, թե՛ պոեզիան նրա քաղաքական պայքարի հիմնական զենքերն էին: Նրա «Մեռելահարցուկ» վեպը հայ ռեալիզիոն հոսանքի դեմ ուղղված քաղաքական երգիծանք է: Վեպի հիմնական առանցքը «Հյուսիսստիպլ»-ի առաջադիմական հոսանքի՝ ռեալիզիոն կղերական բանակի դեմ մղած քաղաքական պայքարն է: Գրվածքի ղլխավոր պերսոնաժները ժամանակակից մարդիկ էին: Պարոն Մարկոսը, Շաքարյանցը, Մանթուխյանցը հայ ռեալիզիոն կղերական հոսանքի պարագլուխներն էին: Մանթուխյանցի տնվան տակ թաքնված է «Ճուրադ»-ի խմբագիր Մսեր մագիստրոս Մսերյանը:

Վեպի պերսոնաժների թվումն էին Գարրիել Այվազովսկին, Սարգիս Զալալյանը, Խալիբը: Կոմս էմմանուելի և տիրացուի դիալոգում առաջին երկուսը ներկայացվում են Քյոռօղլու ավազակների կերպարանքով:

— «Պարոն, — ասաց նա, — Առաքել պատմագիրը, Քյոռօղլուն և նորա ավազակ ընկերները անվանում է ջալալիք, այս մարդիկ հա՞յ էին»:

«Մի՞թե չգիտեք, որ մահմեդականք էին նոքա» — պատասխանեց Կոմսը:

— «Այա ո՞րտեղից է հայերի մեջ Զալալյան մականունը, Ծառյան էի կարծում, որ այդ տունները հառաջանում են ջալալիններից»:

«Նշանակում է, ավելիվ ծագում եք վերագրում եղած այդ տուններին: Ծառյան էի կարծում, որ այդ տունների ծագման պատմությունը, սակայն հավանական է, ջալալիների ժառանգները չեն դոքա: Թո՛ղ որ նույնից Բահան արարը՝ Առաքիայից Կոնստանդնուպոլիս գալով միացել էր Քյոռօղլուի հետ, երբ սա դնացել էր այնտեղ Դեմիրճի օղլուի ձեռքից Այվազը — յուր սիրական մանկավիկը, ազատելու, որ յուր կարգով մի փոքր ժամանակից հետո նույնպես Զալալի դարձավ»:

Դեմիրճի օղլին Նալբանդյանն է, որի ձեռքից Բահան արարը ազատում է Այվազին, այսինքն Այվազովսկուն: Նալբանդյանը հետզհետե ընդարձակում է վեպի շրջանակները և հանդես է բերում ռեալիզիոն բանակի դեմ թուր ուժերին: Այդ նպատակով նա աս-

պարեզ է հաճում Հովնաթանյանին, որ Նոր-Նախիջևանցի մոսկ-վայաբնակ հայտնի հայ վաճառական Հովնանյանցն է: Բնտանեկան այն իրադարձությունը, որ նկարագրում է հեղինակը, ժամանակակիցների պատմածով կատարվել է Հովնանյան ընտանիքում: Հովնանյանը «Հյուսիսափայլ»-ի կատաղի հակառակորդն էր և «Մեղու»-ի ու «Ճռաբաղ»-ի «բարերար և գործակալը»:

Հովնաթանյանցի տիպն այնքան բնորոշ էր, որ ժամանակակից պահպանողական մամուլն այդ անվան տակ ճանաչեց Հովնանյանին: «Մեղու»-ն հայտարարում էր, որ նա «խր զոնից ետ է վերադարձրել» «Հյուսիսափայլ»-ը և գրանով իսկ աբսոլյուտացել է «չարութարո» նալբանդյանի թշնամանքին և նորա խայթող գրչին»:

«Մասյաց աղավնի»-ի, «Ճռաբաղ»-ի, «Մեղու»-ի, «Քառափայտ սերներին» հոսանքին նալբանդյանը հակադրում է լուսավորչալ հյուսիսափայլականներին: Կոմս էմմանուելը խոսում է հայ նոր գրականության էսթետիկայի, լուսավորության մասին և որոշակի շարադրում «Հյուսիսափայլ»-ի առաջադիմական հոսանքի քաղաքական ուղղության նպատակն ու ծրագիրը: Ստեղծագործական նկատառումներով հեղինակը հանդես է բերում Մահմեթի Թովմասի գուտըր Մարիամիկի լիրիկական հեռաքրքրի կերպարը: Դա լուսավորված կնոջ առաջին տիպն է հայ գրականության մեջ: Մարիամիկը «քնքուշ ձայնով» երգում էր հայ նոր գրականության անդրանիկ ներկայացուցիչներից Մեսրոպ Թադիսյանի «Տեր, կեցո՛ղ հայաբանաստեղծությունը և Կոմս էմմանուելի ստանալուրը, որ մեր կարծիքով նվիրված է «Հյուսիսափայլ»-ին:

«Մեռելահարցուկ»-ի քննադատները և հայ գրականության սրտմաղիւրները չեն նկատել, որ վեպի տպագրված հատվածը նրա առաջին մասն է միայն, որ հեղինակը տակավին նախապատրաստում է վիպական հանդույցը: Ահա թե ինչու այդ հատվածը զբրված է բազմաթիվ պլաններով, որոնք առանձին «անկապ» պատկերների տպավորություն են թողնում:

Բայց այդպես է սկսվում ամեն մի վեպ: «Մեռելահարցուկ»-ի առաջին մասի մի քանի պլանների դարդացումը պիտի ստեղծեր վիպական հանդույցը: Այդ երևում է վեպի սյուժեից: Հակառակորդ «Կողմերի» «գործունեությունն» սկսվում է, նախապատրաստվում է նրանց բախումը, և հենց այդտեղ ընդհատվում է վեպը: Բնակա-

նաբար երկը այդպիսի վիճակում տակավին ստեղծագործական ամբողջություն չէ, ուստի և հասկանալի չէ կողմերի առնչությունը:

Նալբանդյանի ստեղծագործական մեթոդի հիմքը գրականության ռեալիստական թեորիան է, որ առաջին անգամ հայ գրականության պատմության մեջ նա շարադրում է «Մեռելահարցուկ» վեպում: Այդ տեսակետից վեպը բացառիկ նշանակություն ունի հայ գրականության պատմության համար:

Գրականությունը դիտելով որպես մարդկային խմացականության սպեցիֆիկ բնագավառ՝ Նալբանդյանը գրում է. «Ինչպես ազդի է, ազդի կյանքն է, այնպես է և նորա պատմությունը, իսկ ինչպես պատմությունն է, այնպես է և նորա բանաստեղծությունը»:

«Մի՛ նույնք արտաքին զանազանությունը, պատմության և բանաստեղծության մեջ, որ երևում է մի անփորձ աչքի, թե պատմությունը մի հիշատակարան է, ստուգապես կատարված իրողությունների, կամ աչք գործերի մեջ զտանված մարդերի, իսկ բանաստեղծությունը գուրս է գալիս իրական ճշգրտությունից»:

Առաջագրելով իրական կյանքի, պատմության և գրականության փոխհարաբերության հարցը՝ Նալբանդյանը հանդում է այն եզրակացության, որ գրականությունը պիտի արտացոլի «ազդի իրական կյանքը» ճիշտ այնպես, ինչպես պատմությունը պիտի լինի կյանքի «հաշիվին»: Պատմության և գրականության առարկան նույնն է: Ինչպես պատմությունը «ստուգապես» կատարված իրողությունների հիշատակարանն է, նույնպես և բանաստեղծությունը գուրս է գալիս «իրական ճշգրտությունից»: Դրանից հետևում է, որ գրականությունը պատմության պես գիտականորեն պիտի մեկնաբանի կյանքը և «վճիռ կայացնի» նրա մասին: «Մեռելահարցուկ»-ի հեղինակը պաշտպանում և հիմնավորում է ռեալիզմի տեսությունը: Նալբանդյանի կարծիքով պատմության և գեղարվեստական գրականության նպատակը՝ «խորհուրդը» նույնն է, տարբերությունը միայն նրանց արտաքին ձևի մեջ է:

«Այո,— գրում է նա,— պատմության տսպարեզն է միմիայն իրական աշխարհը, բայց բանաստեղծությունը չէ կարող դորանով բավականանալ: Նա բարձրանում է իրականից դեպի մի այլ անշարիկի տարածության մեջ աշխարհ — մի աննյութ կամ հոգեկան աշխարհ: Պատմությունն ավանդում է մեզ մի ամբողջ կարգ իրողությունների, որ կատարվեցան որպես հեռանք ազդերի կյան-

քի սլահանջողութեան, որպէս հետեանք այն ազգերի կերպարանա-
գործութեան քաղաքական հանդիսում: Պատմութեանը քննում է այդ
անցքերի բնական և լոգիկական պատճառները, առանց տեղ տալու
չոր էջերի վերա վերացականութեան և մի իրողութեան ստուգու-
թեանը հաստատում է ուրիշ հարակից կամ հրկրորդական իրողու-
թեաների վկայութեամբ: Իսկ բանաստեղծութեանն օգուտ է քա-
ղում մի ծայրացյալ ազատութենից և ստիպւած չէ ենթարկւիլ տե-
ղադրական, ժամանակագրական կամ իրողութեանների կատար-
վելու համար հարկավոր եղած մեքենականութեան կանոններին:
Արդարեւ պատմութեան և բանաստեղծութեան մեջ կա այս զանազա-
նութեանը, բայց դա մի արտաքին բան է, և խոր քննելով խնդիրը,
կտեսանենք, որ բանաստեղծութեանը ևս նույնպէս ճշգրիտ հիշա-
տակարան է, ինչպէս պատմութեանը: Պատմութեանը նկարագրում
է մեզ ազգի հոգեկան կյանքի այն երևույթը, որ մարմին առան
ու երևցան իրական աշխարհի մեջ այս և այն կերպարանքով,
բայց բանաստեղծութեանը մարմնավորում է, տեսանելի և շոշա-
փելի կացուցանում է մեզ ազգի հոգեկան կյանքի այն երևույթը,
որ առանց մարմին ստանալու՝ մնացին ազգի հասկացողութեան
մեջ որպէս նոր վաղափար, բայց որպէս մի անհերքելի և որոշյալ
դրոշմ ազգի բնավորութեան վերա»:

Դժվար չէ նկատել Բելինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի
էսթետիկական հայացքների արձագանքը «Մեռելահարցուկ» վե-
պում: Գրականութեան և պատմութեան, գեղարվեստի և գիտութեան
բովանդակութեան և հասարակական ֆունկցիայի նմանութեանն ու
նրանց արտահայտչական ձևերի տարբերութեանը, որ Բելինսկու և
ՅՕ-ական թվականների դեմոկրատների էսթետիկայի անկյունա-
քարերից մեկն է, գրւած է Միքայիլ Նալբանդյանի էսթետիկայի
հիմքում:

Կասկածից վեր է, որ «Մեռելահարցուկ»-ի հեղինակը քաջ ծա-
նոթ էր Ն. Գ. Չերնիշևսկու «Արվեստի էսթետիկ վերաբերմունքն իրա-
կանութեան նկատմամբ» աշխատութեանն ու այլ հոգւածներին,
որոնք նշանակալից գիր խաղացին Նալբանդյանի գրականագի-
տական հայացքների կազմակերպման գործում:

Միքայիլ Նալբանդյանն արձագանքում էր «Սովրեմեննիկ»-ի
գրական-քաղաքական պծին: Այդ ապացուցում են նաև Նալբանդ-
յանի՝ «Սովրեմեննիկ»-ից կատարած թարգմանութեանները՝ «Հյու-

սիսսափայլ»-ի 1858 թ. երրորդ ամսատետրակում տպագրված ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Բերանժեի «Աղքատ կինը» բանաստեղծությունը Նալբանդյանը թարգմանել է «Սովորեմենիկ»-ից: Նույն ամսագրից է թարգմանված նաև Հայհրիս Հայնեի «Երազ» բանաստեղծությունը, որոնցից առաջինը տպագրված է «Հյուսիսսափայլ»-ի 1858 թվի չորրորդ և երկրորդը 1859 թ. տասնմեկերորդ ամսատետրակներում:

«Մեռելահարցով»-ը նշանակալից ազդեցություն դործեց հեռագա հայ գրականության վրա: Այդ նույն էսթետիկական հիմքի վրա է ստեղծված նաև Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» տաղանդավոր վեպը:

Նալբանդյանի ուղեւորություն լիրիկան նրա քաղաքական պաշարի հիմնական գլխերից մեկն էր «Հյուսիսսափայլ»-ում: Ուշագրավ է, որ Նալբանդյանն իր անդրանիկ բանաստեղծությունները չտպագրեց «Հյուսիսսափայլ»-ում՝ համարելով տակավին սկսնակի թոթովանքներ: Նա փաստորեն նոր էր սկսում իր գրական գործունեությունը: Բանաստեղծն իր առաջին լուրջ չափածո երկերը համարում է «Հյուսիսսափայլ»-ում տպագրված բանաստեղծությունները: Եվ իսկապես դրանք ամսագրի գրական գոհաբներն էին և Նալբանդյանի պոեզիայի պսակը:

Սակայն «անհանգիստ» բանաստեղծի պոեզիան սիրային լիրիկա չէ: Պոեզիայի այդ տեսակը Նալբանդյանի համար «պտրապ վախտի խաղալիք» էր:

«Մանկության օրեր» բանաստեղծության մեջ բանաստեղծը քննութագրում է իր քնարի և պոեզիայի հասարակական նշանակությունը:

Լո՛ւտ կաց, դու քնար, այլ մի՛ հնչիր ինձ.

Ապուլոն, հե՛տ առ դարձյալ դու նորան.

Տուր մի այլ մարդու, որ ընդունակ է

Ձոհ բերել կյանքը սիրած աղջկան:

Ես պիտի դուրս գամ դեպի՝ հրապարակ,

Առանց քնարի, անդարդ խոսքերով.

Ես պիտի գռնամ, պիտի բողբոսեմ,

Խավարի ընդդեմ պատերազմելով:

Իր էսթետիկական հայացքները պոեզիայի բովանդակության մասին Նալբանդյանը շարադրում է տակավին «Մեռելահարցով» վեպում:

«Աղգերի բանաստեղծութեան միակ աղբյուրը, — գրում է նա, — է նոցա ազգային պատմութիւնը, այսինքն աղգի կյանքը: Ազգային է բանաստեղծութիւնը, եթէ բովանդակում է յուր մեջ աղգին պատկանած բաներ, եթէ այդ բանաստեղծութեան սկզբնական տարրն է մի իրողութիւն կամ լինանքն, աղգին պատկանած. նույնպէս, ազգային է բանաստեղծը եթէ երգում էր կամ գրում էր մի այնպիսի բան, որ անմիջական հարակցութիւն ունէր աղգի հետ, աղգի յմացական և բարոյական կյանքի հետ, այս չէ կարելի հերքել: Բանաստեղծութիւնը պիտի որ հոգի ունենա, կյանք ունենա և այս կյանքը նա կարող է ստանալ մի այնպիսի բանից, որ կյանք ունէր, որ ապրում էր, ոչ որպէս մի հանր կամ եզրապատկան մոմիա, այլ որպէս գործարանավոր էակ հառաջ էր գնում յուր կերպարանագործութեան մեջ»:

Գրեթէ նույն ձևով են բնորոշում պոեզիայի և պատմութեան փոխհարաբերութեան լինելը Դոբրուլովը և Չերնիշևսկին:

Էսթետիկական այդ հիմունքների վրա է ստեղծված Նալբանդյանի պոեզիան: Բանաստեղծը երգում է «աղգի կյանքը» և «մարդու հոգին»: Սակայն բոլոր դեպքերում նա չի մոռանում պոեզիայի հասարակական ֆունկցիան, նրա ուսուցիչ-լուսավորական նշանակութիւնը և իսկական լուսավորիչ է նաև պոեզիայի մեջ:

Նալբանդյանը 1859 թ. ընթացքում գրեց «Աղատութիւն» և «Մանկութեան օրեր» հոշակավոր բանաստեղծութիւնները: «Աղատութիւն» բանաստեղծութեան մեջ Միքայիլ Նալբանդյանը ղինվորագրվում է գեմոկրատական ուսուցիչին:

«Աղատութիւն», ինձ կրկնեց

Ճակատագիրը վերևից.

«Աղատութեան» դու ղինվոր

Կամիս գրվիլ այս օրից:

Ո՛հ, փշոտ է ճանապարհը,

Քեզ շատ փորձանք կրոպասե.

Աղատութիւն սիրողին,

Այս աշխարհը խիստ նեղ է»:

Բանաստեղծն ընտրում էր «փորձանքներով լի» աղատութեան փշոտ ճանապարհը:

—Աղատություն,— գոչեցի,—

Թող որոտա իմ գլխին

Փալլակ, կալծակ, հուր երկաթ.

Թող դավ դնե թշնամին,

նա մինչ ի մահ, կախաղան,

Մինչև անարգ մահու սյուն,

Պիտի դուամ, պիտ կրկնեմ,

Անդադար. աղատություն:

Այս մարգարեական տողերի մեջ աղատության մեծ երգիչը պուշակում էր իր փոխարկալից կյանքի դրամատիկ վախճանը: «Աղատությունը» մեծ պաթոսով և սովորով դրված ուղղության հիմն է՝ ուղղված ցարիզմի դեմ: «Կախաղանն ու մահու անարգ սյունը» սիմվոլացնում է ցարական Ռուսաստանը, ուր բանաստեղծի դեմ «գալ էր դնում թշնամին»: Դավադրող ալդ թշնամին հայ հողերակահավայունն ու հակադեմ էր, որ փորձում էր «Սիրիւր քշել» բանաստեղծին: Պատասխանելով իր հակառակորդներին՝ Նալբանդյանը հայտարարում էր իր քաղաքական կրեդոն: Նա հավաստում էր, որ աղատության զինվորը չի վախենում ո՛չ կախաղանից, ո՛չ մահից, ո՛չ աքսորից, և պատրաստ է մեռնել աղատության համար: «Աղատություն» բանաստեղծության մեջ հնչող ուղղությունն ջերմ կոչը վկայում է հրապարակախոսի վճռական դեմադարձը դեպի դեմոկրատական ուղղություն: Հայ անցյալ շրջանի պոեզիայի մեջ հազիվ թե մեկ ուրիշ բանաստեղծ ալդպիսի ստեղծագործական սովորով, զգացմունքի խորությամբ, կրքով, համոզչությամբ և ջերմ լիրիզմով երգել է աղատությունը, ինչպես «Աղատության» հեղինակը:

«Մանկության օրեր»-ում կոնկրետանում է «Աղատություն» բանաստեղծության ուղղությունն բովանդակությունը: «Մանկության օրեր»-ի իդեական առանցքը բանաստեղծին ոգեշնչող ալդպիսի աղատագրության իդեալն էր: Նրա վշտի առարկան «ալդի վիճակն էր»:

Գիտակցությունը հաշորդեց սորան,

Ալդի վիճակը ծանրացավ սրտիս...

Ապուսն տվեց ինձ յուր բնարը

Որպես փարսախշ տրտում ցավերիս:

Սակայն «Մանկության օրեր»-ում «Աղատություն» բանաստեղ-

Ժության ուժեղ պաթոսին փոխարինում է քնարական մեղմ շունչը՝
Բանաստեղծությունը համակված է էլեգիական վշտով: Բանա-
ստեղծի քնարը «հնչում է լալադին ու վշտահար»:

Ավա՛ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց
Նույնպես լալագին, նույնպես վշտահար,
Ինչպես իմ սիրտն էր, իմ զգացմունքը,
Ուրախացուցիչ չգտա մի լար:

Ժողովրդի ստրկությունը խոր վշտով է համակում բանա-
ստեղծին.

Եւ այն փամանակ միայն զգացի,
Որ այս ցավերից ազատվելու չեմ,
Որչափ իմ ազգս կմնա ստրուկ,
Օտարների ձեռք, անխոս, տխրադեմ:

Միջայել Նալբանդյանը սիրո երգիչ չէր, այլ մեծ քաղա-
քացի: Նա իր կյանքը ղոհաբերում էր ոչ թե սիրած աղջկան, այլ
սիրած ժողովրդին, որպես մեծ հայրենասեր: Ահա թե ինչու նա
խնդրում էր Ապոլլոնին «հեռու առնել իր քնարը»:

Լո՛ւտ կաց դու քնար, այլ մի՛ հնչիր ինձ.
Ապոլլո՛ն, հե՛տ առ դարձյալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Զոհ բերել կյանքը սիրած աղջկան:

Բանաստեղծը պատերազմ է հայտարարում խավարի թագա-
վորությանը՝ «անզարդ խոսքերով»:

Ես պիտի դուրս գամ դեպի հրապարակ,
Առանց քնարի, անզարդ խոսքերով,
Ես պիտի գուչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով:

«Մանկության օրեր»-ի հեղինակը ունդուցիոն կովի մարտա-
հրավեր էր կարդում «խավարի թագավորության» դեմ: Նրա գրված
ստրկության թույնից մաքրում էր մարդկանց հոգին:

«Ազատություն» և «Մանկության օրեր» բանաստեղծություն-
ները Նալբանդյանը գրել է 1859 թվին, դեպի Եվրոպա կատարած

իր առաջին ուղեորութեան ժամանակ: Հրապարակախոսի նամակներից երևում է, որ այդ ուղեորությունը նա ձեռնարկել էր էմսի հանքային ջրերում բուժվելու նպատակով: «Տկարութեան պատճառով հարկավոր համարվեցավ մի քանի ժամանակ դուրս գալ Մոսկվայից դեպի օտար աշխարհ» — գրում է Նալբանդյանը Գրիգոր Սալթիկյանին ուղղած 1859 թ. մարտի 31-ի թվակիր իր նամակում: Նալբանդյանն իրոք հիվանդ էր: Սակայն նրա ուղեորության շարժառիթներն անշուշտ այլ էին: Դարիել Այվազովսկու ներքին գործոց մինիստրության գրած դանոսի հետևանքով ամսագիրը փակվելու վտանգի առաջ էր կանգնած: Դանոսն ըստ էության ուղղված էր Նալբանդյանի դեմ, և հրապարակախոսը խույս էր տալիս հետապնդումներից: Մսեր Մսերյանը, որ անշուշտ լավատեսիկ էր այդ իրադարձություններին, Նալբանդյանի ուղեորության առթիվ իր հիշատակարանում գրում էր. «Նալբանդյանը փախեալ է ի Մոսկուէ»: Գրիգոր Սալթիկյանին գրած 1859 թ. մայիսի 5-ի նամակում հրապարակախոսը նկատում է, որ այդ բոլոր նեղությունները նա քաշում է «ղրժոխքի սպասավոր ձիգվիտ հոգևորականներից»: Սակայն Նալբանդյանի առաքելության հիմնական նպատակն էր «Հյուսիսսփայլ»-ը փոխադրել Փարիզ և Գերցենի «Կոլոկոլ»-ի օրինակով ստեղծել հայկական ազատ մամուլ: Դա կարևոր ռեզուլտիտն մի ձեռնարկում էր: Հրապարակախոսն այդ մասին որոշակի ակնարկում է Գրիգոր Սալթիկյանին գրած վերոհիշյալ նամակում. «Ես հույս ունեմ, որ դուք բոլորդ ճշմարտասեր և ազնվամիտ հայրենակիցք ու բարեկամք ինձ օգնական ու ձեռնուղ կլինիք, եթե Մոսկվա փակվի «Հյուսիսսփայլ»-ը, նորից ուրիշ տեղ վերանորոգելու: Հրապարակախոսի բանակցությունները տպարանատեր Ճանիկ Արամյանի հետ հաջողությամբ պսակվեցին, սակայն «Հյուսիսսփայլ»-ի դեմ սկսված ոստիկանական գործը մոտենում էր իր վախճանին: Ամսագիրը թեև չփակվեց, բայց խիստ հսկողության տակ առնվեց: Նաղարյանը փոխեց «Հյուսիսսփայլ»-ը Փարիզ փոխադրելու մտադրությունը, և Նալբանդյանն ստիպված էր վերադառնալ Եվրոպայից: Նաղարյանն ավելի «խոհեմ» ընթացք էր բռնել: «Հյուսիսսփայլ»-ի նոր «խոհեմ» ուղղությունը չէր բավարարում «Ազատության» և «Մանկության օրերի» հեղինակին:

Գյուղացիական շարժման լիերելքը Ռուսաստանում ավելի խորացրեց Ստեփաննոս Նազարյանի և Միքայել Նալբանդյանի քաղաքական տարաձայնությունները: «Հյուսիսսփայլ»-ի խմբագրության պառակտումը հենց քաղաքական այդ տարաձայնությունների տրամաբանական հետևանքն էր: Նալբանդյանը հեռացավ «Հյուսիսսփայլ»-ի խմբագրությունից, որի պաշտոնական խմբագիր Նազարյանը չափավոր մի լիբերալ էր: Դա ճիշտ այն պառակտումն էր, որ տեղի ունեցավ «Սուլիսմեննիկ»-ի խմբագրության մեջ:

Ուշագրավն այն է, որ հայ ռեակցիոն ազգային պահպանողական հոսանքի պարագլուխները «Հյուսիսսփայլ»-ում տեսնում էին երկու հոսանք: Նրանց պաշքարը ուղղված էր դեմոկրատ Միքայել Նալբանդյանի դեմ: Այդ ապացուցում է հենց Գաբրիել Այվազովսկու դանոսը, որով նա խնդրում է ներքին գործոց մինիստրին՝ ըստ հնարավորին շուտ արգելել «Հյուսիսսփայլ»-ը, «չարիքը հենց սկզբից կտրելու համար»: Բանն այն է, որ մինչև 60-ական թվականները «Հյուսիսսփայլ»-ի շուրջն էին համախմբված թե՛ լիբերալները, թե՛ դեմոկրատները և 58—60 թվականների «Հյուսիսսփայլ»-ը տարբերվում է 60—64 թվականների «Հյուսիսսփայլ»-ից, որ վերջնականապես կորցրեց իր ազդեցությունը իր «խոհմ» ընթացքի համար: Ուստի կատարելապես սխալ է այն տեսակետը, որ Միքայել Նալբանդյանը լիբերալ է հյուսիսսփայլյան գործունեության շրջանում:

Հակառակ հայ լիբերալ և ազգայնական պատմագրության պնդումներին, տակավին «Հյուսիսսփայլ»-ի համատեղ գործունեության մեղրամասի շրջանում, տրամագծորեն տարբեր էին դեմոկրատ Նալբանդյանի և չափավոր լիբերալ Ստ. Նազարյանի քաղաքական դրոշակները:

Այդ ավելի ցայտուն կերպով երևում էր եվրոպական լուսավորության, հայերի ազգային ազատագրության, ցարիզմի և ռուսական ռեյուցիոն շարժման նկատմամբ հայ երկու հրապարակախոսների դրաված դիրքերից: Ստեփաննոս Նազարյանը և հայ լիբերալները ստորահաճություն էին անում ռեակցիոն արևմուտքի առջև: «Մենք հայերս մի վաճառական ժողովուրդ ենք» — գրում էր Ստեփաննոս Նազարյանը և հորդորում հայերին հետևել «ևսլոպացոց ծաղկող վաճառականության», անվերապահորեն որդեգրել եվրոպական կյանքի ձևերն ու ողջ կուլտուրան: Մինչդեռ Միքայել

Նալբանդյանը «Հյուսիսսփայլ»-ում խստիվ քննադատում էր բնակ-
ցիոն եվրոպականությունը:

Հիշատակարաններից մեկում խիստ քննադատելով ֆրանսիա-
կան բանաստեղծ Լամարթինի բանաստեղծությունների թարգմա-
նությունը, որ կատարել էր Խորեն Գալֆայանը, Նալբանդյանը
գրում է.

«Լամարթինի Les Harmonies տաղերգությունների յուրաքան-
չուր տողից փշոճ է միստիկականություն, որ ոչ միայն օգտակար
չէ, այլև շատ և շատ վնասակար է, եթե առողջ բանականության
աչքի տակ ձգենք մեր ազդի վիճակը»: «Մեզ օրինակ չէ այս դիպ-
վածում եվրոպացին»: Իր կատարած թարգմանությունների մեջ
Նալբանդյանը լիովին հավատարիմ է այդ սկզբունքին: Հրապարա-
կախոսի կարծիքով ռուսական կուլտուրայի ստեղծագործական
յուրացման միջոցով պետք է ստեղծվի մեր ինքնուրույն ազգային
կուլտուրան. «այսպես ահա, փոքր է լուկ և միայն ստաճալը և
սեպհականներ զանազան գիտությունը և տեղեկությունը, որ
հայտնագործել էին ուրիշները»— գրում է հրապարակախոսը:
«Հարկավոր է, որ այդ ստանալուց և սեպհականելուց նույնիսկ
մարդու մեջ կատարվի մի հեղափոխություն— վերածնելություն.
Նորան անհրաժեշտ հարկավոր է սեպհական գործունեություն,
ընդունող, դնահատող և իշխող այդ գիտությունների վերա.
հարկավոր է մտքի արարչական, ստեղծագործական զորություն.
հարկավոր է, որ այդ տեղեկությունը դրվելին ոչ որպես սերմեր
ավազի վերա, այլ շարժողություն պատճառելին հողի մեջ և պը-
տուղ տալին»:

Միքայել Նալբանդյանի համար ժողովրդի վերածնության և
լուսավորության նախապայմանը ազատությունն է. «ստրկության
մեջ լուսավորության ծիր չի կարող կանաչել», գրում է Նալբանդ-
յանը՝ նկատի ունենալով ցարիզմը: Հրապարակախոսը ցարիզմի
խնկական հակառակորդն է: Տակավին 1859 թվականին «Հյուսի-
սսփայլ»-ի № 3-ում Գաբրիել Այվազովսկու դեմ գրած իր հիշա-
տակարանում նա ցարական Ռուսաստանը համարում էր «սառցա-
պատ բանտ»:

— Կալ է բանտում կենդանի մնալ, քան թե բանտից դուրս
մեռանել:

— Սխալ է, լավ է ազատութեան մեջ մեռանել, քան թե բանտում ապրել,— գրում է հրապարակախոսը:

Մինչդեռ Ստեփաննոս Նազարյանը «Հյուսիսափայլ»-ում հաճախ տարմութեան կոչ էր անում հայերին պարիզմի նկատմամբ և վախենում էր ռուսական գյուղացիական ռեւոլուցիայից: Կարող է երկու կարծիք լինել այն մասին, որ Ստեփաննոս Նազարյանի և Նալբանդյանի հայացքների տարբերութիւնը ոչ թե նրանց տաղանդի կամ տեմպերամենտի մեջ էր, ինչպէս պնդում են հայ լիբերալ ու սոցալականողական պատմագիրները (Լեո և այլն), այլ նրանց քաղաքական հայացքների մեջ: Իրականում Նալբանդյանը 1858—59 թվերին «Հյուսիսափայլ»-ի հրապարակախոսութեանը տվեց քաղաքական ավելի արմատական ուղղութիւն, քան այդ ցանկանում էր ամսագրի պաշտօնական խմբագիր Նազարյանը: Այդ է, որ շնն ըմբռնել այն բանասերները, որոնք ըստ էութեան կրկնում են Լեոյի տեսակետը նաև մեր մամուլում՝ թերադնահատելով 60-ական թվականների ռուսական առաջաւոր միտքն ու ռեւոլուցիոն շարժումը, որի ծնունդն էր Միքայել Նալբանդյանը:

Ամեն կասկածից վեր է, որ Միքայել Նալբանդյանը դեմոկրատ էր «Հյուսիսափայլ»-ի գործունեութեան շրջանում և հենց որպէս դեմոկրատ էլ Նվրոպա մեկնեց հայկական ազատ մամուլ ստեղծելու նպատակով: Նվ այդ հարցի շուրջն հղած տարածայնութեան, «Հյուսիսափայլ»-ի բռնած ավելի աջ լիբերալ կուրսի պատճառով էլ 1860 թվականին հեռացաւ «Հյուսիսափայլ»-ից:



1860 թվականից սկսվում է Միքայել Նալբանդյանի գրական-քաղաքական գործունեութեան երկրորդ և առավել փայլուն շրջանը: Հեռանալով «Հյուսիսափայլ»-ից՝ Նալբանդյանը Պետերբուրգի համալսարանում փայլուն քննութիւն տվեց և ստացաւ հայ-վրացական լեզվի թեկնածուի աստիճան: Կրթական ցինդը հրապարակախոսին անհրաժեշտ էր գրական-հասարակական ինքնուրույն գործունեութիւն սկսելու համար: 1860 թվականին Նալբանդյանը պատվիրակ ընտրվեց Նոր-Նախիջևանի հասարակութեան կողմից և հնդկահայ Մասեհ Բաբաջանյանի ու մյուս կտակների գործով Պոլսի վրայով մեկնեց Նվրոպա ու Հնդկաստան: Այդ նրա երկրորդ ուղևորութիւնն էր Նվրոպա:

Արևմտահայ դեմոկրատական մամուլը ջերմորեն ողջունեց Միքայել Նալբանդյանի դալուստը: «Շատոնց ի վեր կճանաչենք ալ. Նալբանդյանը իր հրապարակախոսություններովը «Հյուսիս-փայլ» օրագրին մեջ և իր ոգվույն և սկզբանցը լավ ծանոթ ըլլալով հեռվին, կօրհնենք նաև իր հետ արժանապատիվ աշխատակիցներուն ջանքերը ի լուսավորություն ազգին և մասնավորապես ռուսիաբնակ ազգայնոց:

Ուստի հիրավի բախտ մը կհամարինք մեզի համար ալ. Նալբանդյանցին ի Պոլիս գալուստն ու մեր ճանշլորությունը իրեն հետ», գրում էր «Մեղու»-ն:

Հրապարակախոսը մոտ մեկ ամիս մնաց Պոլսում: Սահմանադրական պայքարի օրերն էին: Արևմտահայ մամուլը քննության էր առնում «Ազգային սահմանադրությունը»: Նալբանդյանն իսկույն այդ պայքարի մեջ նետվեց: Դանն այն է, որ հայ լիբերալ էֆենդիները ժողովրդական զանգվածների՝ էսնաֆի օգնությամբ՝ մեծամասնություն շահելով և խելով հայ ամիրաներից հասարակական կյանքի վեկը՝ վախենում էին ժողովրդական զանգվածների աճող ակտիվությունից և ծածուկ դաշինք էին կնքում ամիրաների և հոգևորականության հետ: Հենց այդ «սահմանադրական» կրոնական ժողովը պաշտպանեց հայտնի շարագործ վաճառի Պողոս վարդապետին: Այդ «դատը» «մշակված» սահմանադրության պտուղն էր: Նալբանդյանը «Մեղու»-ի 1860 թվի № 20-ում տպագրեց իր հուշակալոր նամակը, ուր մերկացնում էր լիբերալների հակաժողովրդական դավերը և պահանջում էր դատի տալ շարագործ վարդապետին:

Նախկին ժամանակավոր բարեկամներն արդեն քաղաքական հակառակորդներ էին: Նալբանդյանը Պոլսում ստեղծեց դեմոկրատական ճակատ լիբերալների և պահպանողականների դեմ:

Դեմոկրատական ինտելիգենցիան համախմբված էր Հարություն Սվաճյանի խմբագրած «Մեղու»-ի շուրջը: «Մեղու»-ի 1860 թվի դեկտեմբերի 10-ի համարում Նալբանդյանը հրապարակեց իր «Հրաշափառ խայտառակություն» հոդվածը «Երևակ»-ի խմբագիր, ազգային կղերական գործիչ Հովհաննես Չամուրճյանի դեմ: Այդ հոդվածում հրապարակախոսը ծաղրում էր կախարդության և դևերի գոյությունն ընդունող Չամուրճյանին:

Նալբանդյանի քաղաքական գործունեությունը Պոլսում և Եվ-

րոպայում հայտնի էր արևմտահայ հետադիմականներին: Չամուրճյանն իր պատասխան հոգևածում հրապարակախոսին անվանում է «սոցիալիստ» և «կարմիր հասարակապետական»: Չամուրճյանի հոգևածը գրված էր լրտեսական նպատակներով և հրապարակախոսի ռեդուցիոն դործունեության վրա էր հրավիրում ցարիզմի արտասահմանյան դործակալների ուշադրությունը: Նալբանդյանն այդ հոգևածին պատասխանեց իր «Երկու տող» հեղափոխական պամֆլետով: Հրապարակախոսին հայտնի էր հոգևածի բուն խորհուրդը, ուստի նա Չամուրճյանին անվանեց ծախու գրիչ:

Այդ կապակցությամբ հրապարակախոսը մեջտեղ էր քաշում նաև հայ մյուս ռեակցիոներ Գաբրիել Այվազովսկուն «Հյուսիսափայլ»-ի մասին գրած վերջինիս մատնության համար:

«Այս հրավերը առնում ենք պ. Այվազովսքին, մինչ արդեն հախընթաց տարիներում քանի անգամ ամբաստանվեցանք նորանից Ռուսիո ներքին գործոյ՝ մինիստրի առջև, որպես անկրոն, որպես անբարոյական, որպես ապստամբ և խռովեցուցիչ ժողովրդոյան: Պ. Այվազովսքին առաջարկում էր քաջափայլ մինիստրին «Հյուսիսափայլ» վնասակար օրագիրը դադարեցնել և մեզ ձգել սաստիկ պատժի տակ, օրենքի բովանդակ խտուրթամբ: Գուցե պ. Այվազովսքին, հայրական հոգսովությամբ պատրաստել էր մեզ տեղի բնակության ներշնչել կամ կրասնոյարսկ... մեր ջերմությունը մի փոքր բարեխառնելու համար Սիրիլի սառնամանիքը... (բուն առողջապահական խորհրդով): Պ. Այվազովսքին չէ կարող ուրանալ այս իրողությունը. ըստ որում երկար քննությունք և գրագրությունք եղան մինիստրների և ցենզուրյան ժողովի մեջ, այլև առաջարկվեցան հարցմունքներ...»:

Ընդհանրացնելով երևույթը, Նալբանդյանը մեղադրական աթոռին էր նստեցնում ողջ հայ հոգևորականությունը իբրև «դավաճան ու լրտես»:

Հրապարակախոսն իր համար պատիվ է համարում Չամուրճյանի մեղադրանքը: Ռեդուցիոներին վայել արիությանմբ Նալբանդյանը «Երկու տող»-ում հայտարարեց, որ ինքը ժողովրդական դեմոկրատիայի՝ «հայ հասարակ ժողովրդի» քաղաքական ներկայացուցիչն է:

«Մեք ազատական նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու, Մեր անձը և գրիչը ընվիրեցինք հարուստ-

ներին. նորա յուրյանց արժաթե թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ:

Բայց այն խեղճ հայր, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայր, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և կիսազրազեւ ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայր ամենայն արդարացի իրավունքով պատվում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմըտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը:

Պաշտպանել այն հայի առաթուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկենք ոչ բանտի և ոչ աքսորի առաջև, ոչ միայն բանիլ և դրշով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով:

Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսանում ենք ազգի փրկությունը»:

Հրապարակախոսը պատերազմ է հայտարարում հայ ռեակցիային և պատրաստ է «ոչ միայն բանիլ և դրշով», այլև «զենքով և արյունով» պաշտպանել իր քարոզած ազատությունն ու հայ հասարակ ժողովրդի դատը: Հայ հետադիմականների հարձակումներն ու մատնությունները չվախեցրին Նալբանդյանին, և նա 1861 թվին կոնդոնում կապեր հաստատեց ռուս ռևոլուցիոն-դեմոկրատներ՝ Գերցենի ու Օգարյովի հետ: Նալբանդյանին շատ քիչ ժամանակ էր հարկավոր հնդկահայ կտակների կապակցությամբ իր լիազորագրերը անգլիական կառավարությանը հաստատել տալու համար: Իսկ նա կոնդոնում և Փարիզում մնաց երեք ամիս ու կես: Իրականում Միքայել Նալբանդյանը կոնդոնում երկար մնաց հատկապես Գերցենի և նրա շրջապատի հետ կապեր հաստատելու համար: Տուչկովա-Օգարյովյան իր «Հիշողություններ»-ի մեջ պատմում է, որ իրենք հայ ռևոլուցիոնների մասին վաղօրոք լսել էին նրա ընկեր Ստանիսլավից: Դա լեհ էմիգրանտ Ստանիսլավ Տխորթևսկին էր՝ Գերցենի մերձավոր օգնականներից մեկը: Օգարյովյանի վկայությունից երևում է, որ Միքայել Նալբանդյանը Գերցենի և կոնդոնի պրոպագանդիստների հետ ծանոթացել է Ստանիսլավ Տխորթևսկու միջոցով, որի հետ նամակագրություն ունեւ զեպի

Հնդկաստան կատարած իր ուղևորության ընթացքում, Հասկոնալի պատճառներով Նալբանդյանն իր դատավարության ժամանակ պնդում էր, որ ինքը Լոնդոնի պրոպագանդիստների հետ ծանոթացել է 1862 թ. Հնդկաստանից վերադառնալուց հետո, պատահաբար, Գերցենի որդու միջոցով: Խնդիրն այն է, որ 1861 թ. Ռուսաստանում լուրջ իրադարձություններ էին կատարվում: Ռուսական կառավարությունն արդեն հրատարակել էր ճորտերի «ազատագրության» положение-ն: Ռուսական ռևոլուցիոն դեմոկրատական շրջանները մոտալուտ էին համարում գյուղացիական ռևոլուցիան, որ արմատապես պիտի լուծեր գյուղացիական հարցը Ռուսաստանում: Միքայել Նալբանդյանը, որ հայերի ազդային ազատագրության բախտը կապում էր ռուսական ռևոլուցիոն շարժման հաղթանակի հեռանկարների հետ և այդ շարժման ջերմ կողմնակիցներից մեկն էր, չէր կարող տնտարրեր մնալ Ռուսաստանում կատարվող իրադարձությունների նկատմամբ:

Այդ առնականից միանգամայն հիմնավոր է ռուս պատմաբան Միխայիլ Լեմկեի այն ենթադրությունը, որ Միքայել Նալբանդյանը մասնակցել է «Ջեմլյա ի վոլյա» առաջին ռևոլուցիոն կազմակերպության ստեղծմանը:

Ինչպես հայտնի է՝ «Ջեմլյա ի վոլյա» կազմակերպության ծրագիրը հանդիսացավ Օգոստովի 1861 թվին դրած «Խ՝նչ է պետք ժողովրդին» հռչակավոր կոչը, որը տպագրվեց «Կոսևոյ»-ի 1861 թ. հուլիսի № 102-ում: Լեմկեի կարծիքով այդ կոչը, ավելի շուտ ծրագրի նախագիծը, դրված է Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի, Ն. Ն. Օբրուչևի, Ա. Ա. Սլեպցովի, Մ. Լ. Նալբանդյանի և այլոց մասնակցությամբ ու խորհրդով: Լեմկեի այդ ենթադրությունը ապացուցվում է այն հետաքրքրական փաստով, որ «Երկրագործության» հեղինակը մեջբերում է կոչի հետևյալ բնորոշ տողերը. «Ա՛զգ, զինվոր տո՛ւր, ա՛զգ, զրամ տո՛ւր, ա՛զգ, կյանքդ տո՛ւր, քո հայրենիքը պաշտպանելու և նորա պատիվը տեղը բերելու կամ առավել ևս փառավորելու համար»: Այնուհետև Նալբանդյանը բերել է նույն հատվածի շարունակությունը՝ ազատ թարգմանությամբ:

Կոչի հիմնական լուծունդը՝ հող և ազատություն — Նալբանդյանն առաջադրում է որպես գյուղացիական և ազդային ազատագրական շարժման մարտական նշանաբան:

«Ջեմլյա ի վոլյա» դադտնի կազմակերպության հիմնադրու-

Յշունն արդեն մտահղացել էին Օգարյովն ու Սերնո-Սոլովևիչը, հիշատակում է Լեմկենու եւ իսկապես, շատ շանցած «Կոլոկոլը»-ի 1861 թվի համարներում Օգարյովն առաջ էր քաշում գաղտնի ընկերության անհրաժեշտությունը, որպես ազատագրական պայքարի հիմնական նախապայման։ «Դարավոր ստրկության տակ գտնվող երկրի համար այդ լուծը տապալելու այլ միջոցներ չկան, եթե ոչ գաղտնի միությունները», գրում էր «Կոլոկոլը»-ը՝ պատասխանելով «Վեկիկոուս»-ին։

Նալբանդյանի մասնակցությունը «Զեմլա ի վոլյա» կազմակերպության հիմնադրմանը ապացուցում է նաև 1862 թ. Օգարյովի և Գերցինի նամակը Սերնո-Սոլովևիչին։

Կազմակերպության դործունեության հետ է կապված այն արտակարգ վստահությունը, որ տածում էր Օգարյովը Նալբանդյանի նկատմամբ։ «Ամուր զրկում եմ ձեզ երկուսիդ։ Ի սեր տասուծո, ավելի շատ լուրեր»։

«Ո՛ր (Նալբանդյանը) ոսկե հոփի ունի և նվիրված է անշահախնդիր կերպով, նվիրված է միամտորեն, սրբության հասնող շափով» — գրում է Օգարյովը։ Նույն նամակում Գերցենը «գերազնելվադույն մարդ» է համարում «արևելյան բարեկամին»։

Միքայիլ Նալբանդյանը Լոնդոնում և Փարիզում մնում է 1861 թ. հունվարի 6-ից մինչև սպրիլի 19-ը։ Հենց այդ ժամանակաշրջանում նա գրում է իր «Երկու տող» պամֆլետը, որ լույս տեսավ Փարիզում, Ճանիկ Արամյանի տպարանում։ Հրապարակախոսի թղթերից ու բազմաթիվ նամակներից երևում է, որ նա հռթեղուն դործունեություն է ունեցել այդ շրջանում։ Ապրիլի 19-ին Նալբանդյանն ուղևորվում է Հնդկաստան՝ հնդկահայերի նոր-Նախիջևանին կտակած դումարների գործով։ Հաջողությամբ ավարտելով դատավարությունը՝ Նալբանդյանն ստանում է այդ գումարները և 1861 թ. աշնանը վերադառնում ու նորից մեկ ամիս մնում է Պոլսում։ Հավանորեն հենց այդ շրջանումն է, որ հրապարակախոսը բեռուցիոն կազմակերպություններ է ստեղծում արևմտահայերի մեջ։ Չամուրճյանի մի ցուցմունքից երևում է, որ Նալբանդյանին է հարել Մեծ Նոր խանի «Վերին դուռն սենյակում» եղած ընկերությունը։ Այդ սենյակում էին հավաքվում ընկերության անդամները, որոնց մեջ կային «և տաճկերենի գրագիր և պախալ, և սափրիչ, և դերձակ, և ուրիշ անձինք»։ Միքայիլ Նալ-

բանդյանի Պոլսի բարեկամներից էին Վեդուա-ի խմբագիրը, հայ ակնաւոր հրապարակախոս Հարություն Սվաճյանը, հայտնի հասարակական գործիչ Սերոբե Բազմորյանը, բժիշկ Քյաթիպյանը և այլ անձինք: Հարություն Սվաճյանն ու Սերոբե Բազմորյանը բարեգործական ընկերության ղեկավարներից էին: Ընկերության մեջ էին նաև հայտնի բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, վիպասան Մերենցը (Հովսեփ Շիշմանյան), Գր. Օտյանը և արևմտահայ լիբերալ ինտելիգենցիայի այլ ներկայացուցիչներ: Այդ լեզու կազմակերպությունը մեծ ազդեցություն ունեւր և փորձում էր օգնել արևմտահայ գյուղացիությանը: Ըստ էության ընկերության հետ էին կապւում հայ ազգային ազատագրութան որոշ հեռանկարներ: Ահա թե ինչու Միքայել Նալբանդյանը լրջորեն հետաքրքրւում է այդ ընկերության վիճակով: Նալբանդյանն ու իր քաղաքական բարեկամները աշխատում էին իրենց ազդեցության տակ առնել ընկերությունը: Այդ նպատակն է հետապնդում Միքայել Նալբանդյանը «Երկրագործությունը որպէս ուղիւ ճանապարհ» աշխատութեան մեջ, ուր իր ուղուցիտն վարքագիծը հակադրում է բարեգործական ընկերության լիբերալ ղեկավարության վարքագծին, որ քարոզում էր վճռական շրջադարձ կատարել «գեպի Եւրոպիո լուսավոր երկրագործությունն» ու «Եւրոպիո պետութեանց քաղաքականութեան հետևել և անոնց պիտույքներն ու ընթացքն իրեն սեփականել»:

Միքայել Նալբանդյանին ուղղած Սերոբե Բազմորյանի 1862 թ. մայիսի 14-ի նամակից երևում է, որ արևմտահայերի մեջ գոյութիւն ունեին դադոնի կազմակերպություններ: Երեկ հենց այդպիսի մի կազմակերպություն էր Բազմորյանի նամակում հիշատակւած «Հայկ կամ Օրիոն ընկերությունը», որին պարտական էր օգնելու «Լոնդոնի մայր լոժը», այսինքն Լոնդոնի պրոպագանդիստական կենտրոնը: Լոնդոնի պրոպագանդիստներին հայտնի էր Նալբանդյանի գաղտնագիրը, որով նա ճամաւկազրութիւն ունեւր Պոլսի բարեկամների հետ: Ուրեմն Լոնդոնի պրոպագանդիստները ծանոթ էին Պոլսի բարեկամների ընկերութեանը: Հենց այդ կազմակերպութեան միջոցով էր, որ Միքայել Նալբանդյանը Սեծովի ափերով Կովկաս, ապա Ռուսաստան էր փոխադրելու Գերցեւի «Կոլոկոլ»-ը և Լոնդոնի պրոպագանդիստների արգելւած հրա-

տարակոթյունները, Սերոբե Թադևորյանի նամակը ըստ էության մի ղեկուցագիր է շարժման ղեկավարին.

«Անցագիրներու համար ինչ որ ըրիր, շատ լավ է: Ենթենյորին համար ինչ որ ըսիր ի միտ առիւ: Բարեգործական ընկերության համար խոշրնդոտներ կան, բայց չեն անհաղթելի, կարծեմ որ քանի մը օրեն ի կարգի կ'մտնաւ: Բավական գումար մը ժողովեցինք: Դրսի գործակալներու երթալիք թուղթերը դեռ ճամփա չեւան: Ասիկա քեզ պիտի բարկացնե, ես ալ կրարկանամ, բայց հարկ է, որ այսպես ըլլա. այսուամենայնիւ այս օրերս ղանոնք ալ պիտի ճամփա հանիմք»:

Թադևորյանի նամակը հիմք է տալիս ենթադրելու, որ Միքայել Նալբանդյանը ղեկավարում էր հայ ազգային ազատագրական շարժումը նաև արևմտահայերի մեջ: Եւ այդ շարժումը կադմակերպչորեն, կապված էր ռուսական ռեոլուցիոն դեմոկրատական շարժման հետ:

Ուշագրավ է, որ վերոհիշյալ նամակում որոշակիորեն հայտնի՝ են դառնում նաև Նալբանդյանի կապերը Զեյթունի 1862 թ. ապստամբության հետ:

«Տավրոսին վարդապետ մը եկաւ հոս, քանի օր է, որ կաշխատիւմ, ու առուտուր մը ընեմ այս մարդու հետ. հաղիւ կրցա քսան երեսուն հողիով ժողով մը կազմել և այն ալ մեծ դժվարութեամբ. քիչ մը ստակ ես, քիչ մ'ալ բարեկամին մեկը տվինք անոր, որ հարկաւոր եղած դասագրքերն առնենք և ճամփու ծախք ընեն», — գրում է Թադևորյանը: «Դասագիրք» Նալբանդյանի գաղտնադրութեամբ նշանակում էր ղենք, ուրեմն, Թադևորյանը տեղեկացնում է Նալբանդյանին, որ ղենք է ուղարկված Զեյթուն: Այսպիսով Սերոբե Թադևորյանի նամակը լույս է սփռում հրապարակախոսի գործունեության մի կարևոր շրջանի վրա, որի մասին քիչ տեղեկություններ կան:

Թողնելով Պոլիսը՝ 1861 թ. դեկտեմբերի 27-ին Նալբանդյանը մեկնում է Եվրոպա, հատկապես Լոնդոն, ուր հասնում է հունվարի 9-ին: Այնուհետև մինչև նույն թվի մայիսը լինում է Լոնդոնում և Փարիզում: Այդ շրջանում հրապարակախոսը ամենամոտ հարաբերությունների մեջ էր Գերցենի և Լոնդոնի պրոպագանդիստների հետ: Քաղաքական այդ մտերմությունը հաստատում է Գերցենի և Օգարյովի հայտնի նամակը Սերո-Սոլովեիչին: Տուչկովա-Օգար-

յովան պատմում է, որ Միքայիլ Նալբանդյանը պարբերաբար մասնակցում էր Գերցենի տան համալսարաններին: Հենց այդ ամիսներին էր, որ Նալբանդյանը եռանդուն ուղղություն դործունեություն է ծավալում Եվրոպայում և գրում «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» հոշակավոր աշխատությունը՝ կանխատեսելով վերահաս ուղղություն ճգնաժամի հասունացումը Ռուսաստանում, շարադրում է հայ աղգային ազատագրական շարժման իր ուղղություն ծրագիրը:

Քննադատելով 1861 թվականի դյուղացիական ռեֆորմը՝ հրապարակախոսը եղբահանդում է, որ ռուսական կալվածատիրական կառավարությունը «ազատագրություն» անվան տակ լուրջ ճորտատիրություն անունն է փոխում և կողոպտում է ռուս գյուղացիությանը:

«Բայց շինականին ի՛նչ մխիթարություն անվանափոխության մեջ, քանի որ դործը նույնն է: Պիտի ասեն, որ այդ տեսակ ազատությանից շինականը եթե տնտեսական մասնում ավելի վնաս ունի քան թե օգուտ, գո՛նե կաղատվի ստրկությանից և պարոնի իշխանության և լուծի տակից: Այստեղ ևս մխիթարական բան չկար շինականին. այո՛, պիտի ազատվիր պարոնից, բայց դորա փոխանակ պիտի ընկներ կառավարության աստիճանալորների ձեռքը, այսինքն, անձրեկի երեսից՝ ծովը»:

Ծիշո ալգայիսի դնահատական է տալիս գյուղացիական ռեֆորմին Չերնիշևսկին, որը ռեֆորմն անվանեց դարշեխություն: Նալբանդյանը «Երկրագործության» էջերում, Չերնիշևսկու օրինակով, պաշտպանում է գյուղացիական հարցի լուծման ուղղություն վարքագիծը: «...Ստրուկը կացինով կվճռե գործը:

Ժամանակը շատ մոտեցած է, և կարծվածից ավելի մոտեցած...

Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ, մեծ խորհուրդ ունի...», գրում է «Երկրագործության» հեղինակը:

Բայց ամենահետաքրքրականն այն է, որ Նալբանդյանն աղգային ազատագրության հիմնական հարցը համարում է «հողի և ազատության» հարցը, այսինքն գյուղացիական հարցը: «Այսօր եթե մի ժողովուրդ ստրուկ է, եթե նա հող չունի և եթե հաջողի նորան հող ձեռք բերել, իրավունքը և ժամանակը պահանջում են

տնօրինել այնպես, ինչպես ցույց է տալիս ներկա հարկը, ինչպես ցույց է տալիս բանականությունը, և ոչ այնպես, ինչպես հին օրերից մնացած, ավանդական կառավարությունը տնօրինել են մինչև այժմ, այսինքն տեղության կամ ազնվականության սեպհականեղով հողը և հասարակ ժողովուրդը զրկելով իրավունքից։ Վերջին դիպվածում ազդեցությունը ազատություն չէ ժողովրդին, նա փոխում է միայն նորա լուծը. մենք ղրականապես թշնամի ենք այդպիսի ազդեցության, ինչպես թշնամի ենք բռնակալության, ո՛ւր կամ ի՛նչ կերպով որ հայտնվի» — դրում է Նալբանդյանը։

Հրապարակախոսի կարծիքով ազգային ազատագրական շարժումը դեմոկրատական ուղուցիայի մի անբաժան մասնիկն է։ Ահա թե ինչու Նալբանդյանը հայ և մյուս ազգերի ազատության բախտը կապում է ուսական ուղուցիո՞ւն շարժման հաղթանակի հետ և հետևողական դեմոկրատիայի դիրքերից խիստ քննադատում քաղաքակրթությունը տարածելու անվան տակ եվրոպական պետությունների վարած զաղութային հույժտակիչ քաղաքականությունը։

— Անգլիան ամիսը երեք շոգենավ փոխոն բռնությամբ ներս է տանում Չինաստան, թունավորում է մարդկությունը և այդ թույնի փոխարեն ամիսը երեք շոգենավ արծաթ է ստանում. այս անբարոյականություն է։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Իրլանդիան, յուր աշխարհագրական դրությունը, յուր բնական սահմաններով, յուր կրոնքով, սովորությամբ և ավանդությամբ բոլորովին հեռի է Անգլիայից, քանքարավոր մարդերով ավելի ճո՛ղ է, քան թե ինքը Անգլիան, բայց Անգլիան հախառակ նորա կամքին, պահում է նորան յուր ձեռքի մեջ, և Թեյմսը շատ ժամանակ չէ, որ հրատարակեց, թե Իրլանդիո անկախության աշխատողքը իբրև տեղության ընդդեմ ապստամբք, կարող են դատապարտվել դեպի թիարան։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Ալստրիան, յուր 8 միլիոն ձկնաբյուռն ավստրիացիներով բռնացել է Լոմբարդիո վերա և չէ կամենում Վենետիկը ձեռքից Թողուլ։

«Քաղաքակրթություն է տարածում»։

— Մորթիլ է. Հոնգարիան, խեղդել է Դալիցիան, Դալմա-
տիան, Բոհեմիան, և այլ գավառներ ու ազգեր:

«Քաղաքակրթություն է տարածում»:

— Պրուսիան, Լեհաստանի մահվան առաջին պատճառը.
Հալիշտակիլ է նորա Պոզնանյի դքսությունը և խեղդում է...

«Քաղաքակրթություն է տարածում»:

— Եվրոպական տերությունները անդադար օգնությունն են տա-
լիս Թյուրքիային, որ նա դիմանա և չկործանվի:

«Որպեսզի Թյուրքիո ստրկացած հայ, սկլավոն և հույն ժո-
ղովուրդը քաղաքակրթիչ հոգաբարձուից չզրկվի»:

Սոքա ամենքը, իբրև բռնի վարժապետ, քաղաքակրթություն
են տարածում, և ոչ ոք չէ հարցնում աշակերտի կամքը, կամի՞-
նա դոյր ուսանել, թե ոչ: Սակայն չէ պիտո աչքից հեռացնել նո-
ցա քաղաքակրթության տարբերությունը մեր հասկացած քաղա-
քակրթութենից: Բանդերն են նոցա զպրոցները, պոլիցախանք
և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ գիրքը, աք-
սորը՝ բարոյականությունը վերին ուստիճանի կազդորելու մարդա-
րան, կախաղանը՝ և զլիսպարտություն խայտառակ սյունը՝ «զմուռն
նշմաբիտ, որ տանի ի կեանս յախտենականս»:

«Կեցեցե կատուն, որ յուր փորի համար մուկ է բռնում»:

Դադուբային ճնշման դեմ ուղղված այս տողերը այժմ էլ չեն
կորցրել իրենց թարմությունը:

Միքայել Նալբանդյանի կարծիքով ազգային-ազատագրական
շարժումը պետք է դեմ դնել եվրոպական պետությունների այդ
«քաղաքակրթության»:

«Այսօր,— գրում է Նալբանդյանը,— ճնշված մարդերի հա-
մար, ազգությունն է նոցա միակ գրոշը, որ կարող է բացվիլ
բռնակալության ընդդեմ: Ազգությունն է միակ ճնառը դեմ դնելու
նաև լուսավոր բռնակալության, երե միայն բռնակալությունը կա-
ռաղ է լուսավորվիլ կամ լուսավորվելուց հետո հաճախել իբրև
բռնակալություն,— կրկնում ենք, մեր դարու երեկելի մտածողներից
մինի հետ»:

Նալբանդյանը «լուսավոր բռնակալությանը» հակադրում է
ճնշված և ճնշվող ազգությունների հասարակ ժողովուրդների ռեո-
լուցիոն համերաշխությունը, որպես նրանց ազատագրման նախա-
պայման: Նալբանդյանի կարծիքով հզոր ազգության հասարակ ժո-

շուրջը նույնպես իր պետության ստրուկն է և՛ այն մարդիկ, որոնց ազդեցությունը դուրսնում է երկրագունդը, բնակից մինչև քեզ, ստրուկ են յուրյանց կառավարության ձեռքում»:

Հրապարակախոսը հենց եվրոպական այդ կառավարությունների սապարման հետ էր կապում ճնշված ազգերի ազատագրության բախտը:

«Այո՛, եթե հավասար իրավունքը այսօր խոստովանվի բոլոր երկրագունդի վերա, եթե ներկա եղած պետական համակարգությունքը այսօր ոչնչանան, վաղը ոչ միայն չէ մնում ազգության փնդիրը, այլ հարկավոր ևս չէ»:

Այդ հին համակարգությունները պիտի ոչնչանային դեմոկրատական ռեուլուցիայի հաղթանակով, որ Նալբանդյանի կարծիքով իսկական քաղաքակրթություն էր բերելու ճնշված ազգերին:

«Այո՛, Նվրոսյան կանգնած է այսօր մի դժվար լուծանելի խնդրի առջև. այդ տնտեսական խնդիրն է, մաքր և հացը: Եվ այդ խնդիրը կանուխ թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի: Ոչինչ բանություն, ոչինչ պահպանողական համակարգություն, ոչինչ ընդդիմադրություն, որևիցե կողմից, չէ պիտո կարողանա փակել նորա առաջը, թեև այսօր հալածակա՞ն և արսորակա՞ն են այդ ապստոլայի մարդարեքը և առաքյալքը»:

Միքայել Նալբանդյանը մոտալուտ է համարում «այդ օրը»:
«Դեմոկրատական շարժման աշխուժացումը Նվրոսյայում,— գրում է Լենինը,— լեհական խմբորումը, դժգոհությունը Ֆինլանդիայում, ողջ մամուլի և ողջ ազնվականության պահանջը քաղաքական ռեֆորմներ անելու, «կոլտիլ»-ի տարածումն ամբողջ Ռուսաստանում, Չերնիշևսկու հզոր քարոզը, որը կարողանում էր գրաքննության ենթակա հոդվածների միջոցով դաստիարակել իսկական ռեուլուցիոներների, պրոկլամացիաների երևալը, դյուղացիների հուզումները, որոնց «շատ հաճախ» պետք էր լինում զինված ուժով և արյունհեղությամբ հարկադրել ընդունելու «положение»-ն, որ կպում էր նրանց ինչպես լորենի, ազնվական հաշտարար միջնորդների կողմից հրաժարումները կիրառելու այդպիսի «положение»-ն, ուսանողական անկարգությունները,— այսպիսի պայմաններում ամենազեղուշ և զղասող քաղաքագետը պետք է որ լիո-

վին հնարավոր համարեր ունեցիւն բռնկումը և դշուղացիական ապստամբութիւնը՝ միանգամայն լուրջ մի վտանգ»¹։

Նալբանդյանը և Պոլսի բարեկամները նախապարտադրեցին ինն ունեցիւն մասնակցել «ղենքով ու արյունով»։ «Երկրագործութիւնն» արձագանքում էր քաղաքական այդ տրամադրութիւններին։

Ունեցիւն այդ վարքագիծը հրապարակախօսը հակադրում էր հայ լիբերալների քաղաքական ուղեգծին, որ հայկական ազատագրութեան բախտը կապում էր եվրոպական պետութիւններէ դեպի Մերձավոր Արեւելք կատարած էքսպանսիայի հետ. «մեր կռիւնքը պիտի ըլլա եվրոպական տերութիւններու, եթէ ոչ ամենուն, դեթ մեկ մասին, անկեղծ համակրութիւնն ու պաշտպանութիւնը» — ասում է արեւմտահայ լիբերալ բուրժուազիայի ականավոր զեկավարներից մեկը՝ Գր. Օտյանը Նշկյանին դրած իր նամակում։

Այդ լուսնի տակ հասկանալի է դառնում հրապարակախօսի բանաստեղծ Ռափայիկ Պատկանյանի «Հիմի է՛լ լռենք» և «Հայկ և Լեւոն մոռանանք, հղբայրք» բանաստեղծութիւնների դեմ դրած «Հիմի է՛լ խոսենք» և «Հայկ ու Տիգրանին հիշենք» պարոդիաների քաղաքական իմաստը։ Պատկանյանն այն անձնավորութիւններից էր, որոնք իրենց հույսերը կապում էին եվրոպական պետութիւնների՝ «հայկական հարցին» միջամտելու հետ։ Ահա թէ ինչու Նալբանդյանը ծաղրում է բանաստեղծի ազգային ռոմանտիզմը։

Սակայն «Երկրագործութիւնը» չի սահմանափակւում միայն ժամանակի «պետական համակարգութեան» քննադատութեամբ։ Նալբանդյանը ոչ միայն ունեցիւն-դեմոկրատ էր, այլև նախամարքսյան սոցիալիզմի ներկայացուցիչներից մեկը, ուստի նա քննադատում է ողջ կապիտալիստական քաղաքակրթութիւնը, կապիտալիստական սխտեմը։ Հենց «հարուստ Անդրկայում» «բոլորավոր դործավորք տանջւում են սովից» — գրում է «Երկրագործութեան» հեղինակը, և այդ թշուառութեան պատճառը կապիտալիզմն է, եզրակացնում է նա։ Հրապարակախօսը քննադատում է «հաւասարութեան, սղատութեան և հղբայրութեան» ֆրան-

¹ В. И. Ленин, Соч. т. V, стр. 26—27 (изд. 4-е).

սիակէան բուրժուական ռեւոլուցիայի նշանաբանը, որ իսկական սոցատութիւն, հաւլասարութիւն և եղբայրութիւն չբերեց ժողովրդին:

Նալրանդյանը կապիտալիզմին հակադրում է սոցիալիստական սիստեմը, որ «աշխատութիւնը աշխատութիւն է և ոչ ծառայութիւն», ուր «մարդկային իրավունքներն անխտիր հաւասարաշափ են» և հանգում է հողի ու արտադրութեան միջոցների համայնացման գաղափարին: «Հողը,—գրում է նա,—սլատկանում է հասարակութեան, որի ամեն մի անդամ իրավունք ունի հավասար քանակութեան վերա, հալիտեանս ժամանակներին. և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, իսկ մյուս կողմից առանց արդելքի հողը գործելու և արդունալորելու իրավունքն անկողոպտելի պահելով, այդ հասարակութեան անդամը և նորա սերունդը հաստատում է յուր կշանքը մի ամուր և ապահով հիմքի վրա և անհնար է, որ նա կամ աղքատութեան հանդիպի, կամ իսպառ կարոտ մնա»:

Սակայն Նալրանդյանը նախամարքսյան սոցիալիզմի դիրքերից է քննադատում կապիտալիստական արտադրութեան եղանակը, իսկ ճնախկին սոցիալիզմը,— գրում է Էնգելսը,— թեև քննադատում էր արտադրութեան գոյութիւնն ունեցող կապիտալիստական եղանակը և դրա հետևանքները, բայց չէր կարողանում բացատրել այդ եղանակը, հետևապէս և ի վիճակի չէր լուծելու այդ հարցը. նա միայն կարող է դատաւարտել այդ եղանակը իբրև մի վատթար եղանակ: Սակայն, խնդիրն այն է, որ մի կողմից ցույց տրվի արտադրութեան կապիտալիստական եղանակի պատմական ընդհանուր կապակցութիւնը և դրա անհրաժեշտութիւնը պատմական մի որոշ ժամանակաշրջանի համար, հետևապէս և ցույց տրվի նրա կործանւելու անհրաժեշտութիւնը, իսկ մյուս կողմից նաև մերկացվի նրա տակաւին թաքնված ներքին բնույթը, քանի որ նախկին քննադատութիւնն իր ուշադրութիւնն ավելի նրա հետևանքների վրա էր բեղեռել, քան բուն խնդրի ընթացքի վրա: Այս իրականացալ շնորհիւ այն հանգամանքի, որ հայտնաբերվեց հալիլյալ առժեքը»:

«Այդ երկու խոշոր հայտնագործութիւնների համար՝ պատմութեան մատերիալիստական ըմբռնողութեան համար և հալիլյալ

արժեքի միջոցով կապիտալիստական արտադրության գաղտնիքը մերկացնելու համար մենք հրախտապարտ ենք Մարքսին:

Այդ հայտնագործությունների հետևանքով սոցիալիզմը դիտություն դարձավ, որի մշակությունն այժմ հարկավոր է միայն շարունակել իր բոլոր մանրամասնություններով և ընդհանուր կապակցություններով»¹:

«Երկրագործության» հիշինակը սոցիալիստ-ուտոպիստ էր և Չերնիշևսկու օրինակով հին կիսաֆեոդալական-դյուղացիական համայնքը համարում էր սոցիալիզմին անցնելու ձևը: Նալրանդյանն ուղղակի մեջբերում է Չերնիշևսկու «Փիլիսոփայական նախապաշարումների քննադատությունը համայնական հողատիրության դեմ» հոդվածը և միակ բառերաբառ էլքը համաճում է «նասա-բակական սկզբունքը» (общинное начало), որ կա Ռուսիո մեջ»:

Այս տեսակետից հավասարապես Նալրանդյանին է վերաբերում Լենինի Չերնիշևսկուն տված հանձարեղ գնահատականը.

«Չերնիշևսկին,— գրել է Լենինը,— սոցիալիստ-ուտոպիստ էր, որ երազում էր անցնել սոցիալիզմին հին, կիսաֆեոդալական, գյուղացիական համայնքի միջոցով, որը չէր տեսնում և անցյալ դարի 60-ական թվականներին չէր կարող տեսնել, որ միայն կապիտալիզմի ու պրոլետարիատի զարգացումն ընդունակ է ստեղծել նյութական պայմաններ և հասարակական ուժ սոցիալիզմի իրականացնելու համար: Սակայն Չերնիշևսկին ոչ միայն սոցիալիստ-ուտոպիստ էր: Նա նաև ռեուլուցիոն-գեմոկրատ էր, կարողանում էր ազդել իր դարաշրջանի բոլոր քաղաքական իրադարձությունների վրա ռեուլուցիոն ոգով, դրաքննության բոլոր խոչ ու խուֆերի միջով անցկացնելով գյուղացիական ռեուլուցիայի գաղափարը, բոլոր հին իշխանությունները խորտակելու համար մասսաների մղելիք պայքարի գաղափարը»²:

Սակայն Նալրանդյանի երկրագործական համայնքները պիտի վարեն խոշոր տնտեսություն, որ ստեղծվելու էր դիտության և տեխնիկայի վրա: Այդ հարցում էլ Նալրանդյանը համամիտ է Չերնիշևսկու հետ: «Նույն այն գործարանքը, նույն այն մեքենաները, որ կարող են ներգործել Նվրոպայի մեջ, ծանր պայմաննե-

1 Ֆ. էնգելս, «Անտի-Դյուրինգ» էջ 31—32 (հայ. հրատ.):

2 В. И. Ленин, Соч. т. XVII, стр. 97 (изд. 4-е).

քի տակ, կարող են ներդրածել և Ասիո մեջ, ուր կյանքի պիտույքը, պարզութիւնը և այլ բնական հանգամանքները ավելի դյուրութիւն կարող են տալ այսպիսի ձեռնարկութեանց»:

Նալբանդյանը բացասելով կապիտալիզմը և կապիտալիստական հասարակութիւնը՝ լիովին կողմնակից է նրա ստեղծած տեխնիկական ուժերի օգտագործման: Լկենբրե է, որ Նալբանդյանն առաջադրելով այդ խոշոր տնտեսութեան սկզբունքը, առաջ է քաշում նաև աշխատանքի համայնական ձևերը, որոնց մասին նա խոստով է «Սոս և Վարդիթեր»-ի կրիտիկայի մեջ: Նկատելով Պոռշյանի վնասում Արարատյան դաշտի զոռոգացիութեան մեջ դյուրութիւն ունեցող փոխադարձ օգնութիւնն ու համատեղ աշխատանքը՝ Նալբանդյանը հսկայական նշանակութիւն է տալիս աշխատանքի այդ ձևին:

«Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» աշխատութիւնն այն ամենակարեւոր փաստաթուղթն է, որ վկայում է Նալբանդյանի քաղաքական կապերը ռուսական ռևոլուցիոն շարժման հետ և միաժամանակ ներկայացնում է Նալբանդյանին, որպէս իր ժամանակի հայկական մտավոր շարժման ամենառևոլուցիոն և ամենաառաջադիմ ներկայացուցիչը:

Հրատարակութեան հանձնելով «Երկրագործութիւնը» 1862 թվի դարնանը, մայիսին Նալբանդյանը վերագառնում է Պետերբուրգ: Մեկ ամիս նա զբաղված էր Հայաստանի քարտեզի հրատարակութեան խնդրով, ապա ուղևորվում է Նոր-Նախիջևան՝ հնդկահայերի թողած ժառանգութեան հաշվետվութիւնը ներկայացնելու համար, և տեղ հասնում հուլիսի 10-ին: Չերքակալվում է 14-ին և ուղարկվում Պետերբուրգ, Պետրոպավլովսկի ամրոցը: 1862 թ. հուլիսի 29-ին բերդի պարիտ Սարոկինը զեկուցում է թագավորին և 3-րդ բաժանմունքին ուղղված իր գաղտնի զեկուցագրում գրում է, որ Պետերբուրգի համալսարանի թեկնածու Նալբանդովը բանտարկված է Ալեքսեևսկի ռազմելինի 8-րդ կամերայում: Լոնդոնի սրբապապանդիստների հետ քաղաքական կապեր ունենալու հետեւանքով ձերբակալվեցին 32 հոգի, որոնց թվում Ն. Գ. Չերնիշևսկին (որ դատվեց առանձին), Ն. Ա. Սերնո-Սոլովևիչը և Միքայել Նալբանդյանը: Քաղաքական այդ դատավարութիւնը հայտնի է «32-ի դատավարութիւն» անունով: Չերքակալութեան համար

հիմք էին ծառայում Լոնդոնից Պետերբուրգ վերադարձած Վեստշ-
նիկովի մոտ հայտնաբերված Լոնդոնի պրոպագանդիստների թղթ-
թակցություններն ու հասցեները: Յուր բաժանմունքը ուշի ուշով
հետևում էր Լոնդոնի պրոպագանդիստների գործունեությանը: Նրա
արտասահմանյան գործակալը ներկա էր եղել Գերցենի տան հա-
վաքույթին և անմիջապես հեռագրել Պետերբուրգ: Այդ հիշատա-
կում է նաև Գերցենի Վեստշնիկովը. ձերբակալվել էր նաովի վրա:

Բակունինին դրած 1862 թ. սեպտեմբերի նամակում Գերցենը
դատապարտում էր Բակունինին, որի անդադրության պատճառով
բանտ նետվեց Միքայել Նալբանդյանը: Բակունինի մասին Գերցե-
նը Նալբանդյանին նախադգուշացնում էր տակավին արտասահ-
մանում: 1862 թվի ապրիլի 22-ին Տուրգենինն ուղղած նամակում
Գերցենը գրում է. «Նալբանդովը շատ ու շատ աղնիվ մարդ է: Մի
թույլ տուր, որ նա բերի աշտուղ Բակունինի կնոջը: Առդիր նա-
մակը հանձնիր Նալբանդովին, եթե նա չի մեկնել»:

Նալբանդյանի ձերբակալությունն ու դատաւարությունը դայ-
րույթի մեծ ալիք էր առաջացրել ղեմոկրատական խավերի մեջ,
ինչպես վկայում էր «Մեղու»-ն: Իսկ հայկական ուսուցիչական ցնծում
էր. հրապարակից վերանում էր ամենաուսուցիչ ուսուցիչի մար-
տիկը, հայ ուսուցիչի ղեմոկրատիայի պարագլուխը և ժամանա-
կի հայ ամենամեծ հրապարակախոսը: Առանձնապես ցնծում էր
Խալիբը, որ հասունի նամակով շնորհավորում էր Գաբրիել Այվա-
զովսկուն, իսկ Այվազովսկին այդ «ուրախառիթ լուրը» հաղորդում
էր Պոլիս՝ յուրայիններին: Սվաճյանի «Մեղու»-ն այդ առթիվ հա-
տուկ հոգված գրեց «ազատության բարեկամի մասին, որ ձգտում
էր ազատության ոչ միայն իր ազգին, այլև ընդհանուր մարդ-
կության ազատության համար»: Որոնք որ զինքը և իր գործերն ու
վարքը լավ ճանչցին, կողալսին իր վրա, իրեն իրենց աչքին լու-
սին վրա. կողալսին, այո՞, և իրավունք ունեն զողալու. վասնդի
այս շափ կատարելություններով փայլող սակավգլուտ անձերն
կարի քիչ գտնված են ոչ միայն Արամյան, այլև ընդհանուր
մարդկային ազգի մեջ՝ որոնք իրենց ժամանակակիցներուն ատե-
լությանը, թշնամությանն ու որոգայթներուն զոհ հղած չըլլան»:
Այվազովսկուն և յուր բարեկամներին նկատի ունեւր «Մեղու»-ն,
երբ գրում էր. «Մեկ քանի գեղեցիկ մարդիկ, մեկ քանի վատ
հոգիներ անհամբեր սրտով և անարգ վրեժխնդրությամբ անոր,

առանց արդար դատաստանի, դատապարտության լուրը կսպասեն»:

1863 թվին, փետրվարի 17-ի թվահիր նամակում քաջալերելով եղբորը՝ Նալբանդյանը գրում էր, որ ինքը սովոր է տանջանքների և իր «կյանքի ճանապարհին երբեք վարդեր չեն ծաղկել»:

Թեև Նալբանդյանն իր բանտային կյանքը համարում է «կենդանի մահ», սակայն, մեծ կաշնամուրը խորապես հավատում էր գաղտյ լավագույն օրերին: «Բայց պետք է հուսալ, որ ամսական օրը այդպես չի մնա, կցրվին ամպերը, կշնչե գարնանային զեփյուռը և արևը կծագի՝ լուսավորելու ու ջերմացնելու այն մռայլ ու սառած դեմքերը, որ խոնջացած են երկարատև տառապանքից», — գրում է Նալբանդյանը եղբորը՝ 1863 թ. ապրիլի 8-ի նամակում:

Հրապարակախոսի նամականին գրական-գիտական բացառիկ հետաքրքրություն ունի: Բանտից գրած նամակներում Նալբանդյանը խոսում է գիտության, գրականության, լեզվի, գեղարվեստի ժամանակակից հարցերի մասին: Զարմանք է պատճառում հրապարակախոսի էնցիկլոպեդիկ գիտությունը: Նա իսկական գիտություն մարդ է և ամենալայն տեղեկություններ ունի գիտության բազմաթիվ բնագավառների մասին, իսկ մի շարք ասպարեզներում կատարյալ մասնագետ է: Հրապարակախոսին առանձնապես ուզեցրում է բնագիտության առաջադիմությունը: 1863 թվի մայիսի 1-ի նամակում խոսելով սաղմնաբանության զարգացման մասին՝ նա գրում է. «Հոյակապ գիտություն է սա, հղբայր, ճշմարիտ է, պեռ մանուկ է, բայց ինչպիսի ասպագա ունի — խոսքով զրեթե անկարելի է արտահայտել. բարեպաշտ իդեալիստների մազերը կդիզանան և Սպանիայում թերևս կրկին կբորբոքվեն հավատաքննության խարույկները...»:

Նալբանդյանի կարծիքով սաղմնաբանության զարգացումը հսկայական նշանակություն ունեւր մատերիալիստական փիլիսոփայության համար, այսինքն հաստատում էր նրա դրույթները: Նույն նամակում հրապարակախոսը մեծ ոգևորությամբ գրում է նաև քիմիայի մասին: «Նթե քիմիան և մանրագիտակն այլևս մի րանի հառաջադիմական քայլեր անեն, այն ժամանակ միայն ցնծությունից, միայն բանականության հաղթանակից կարելի է մեռնել»:

Չափազանց լայն է հրապարակախոսի գիտական հե-

տաքրքրության շրջանը: Նա հսկայական դործնական նշանակություն է տալիս բնագիտության զարգացմանը, որ «պիտի նպաստեր մարդկային կյանքը բարելավելուն այս աշխարհում»: Հենց ժողովրդի վիճակը բարլոքելու դործնական նպատակներով նա 1862 թ. դեկտեմբերի 30-ի նամակում խնդրում է Անանիա Սուլթանշահին փորձել սորգոյի ակլիմատիզացիան, ըստ որում նամակում մանրամասնորեն շարադրել է այդ բույսի մշակության եղանակը: 1863 թ. ապրիլի 14-ի նամակում Նալբանդյանը գրեթե շարադրում է իր գրելիք «աշխարհաբարի քերականության» հիմնական սկզբունքները: Հրապարակախոսի նամակներն ամենայն իրավամբ գիտական հոգվածներ են: Նամակներից երևում է, որ բանտում Նալբանդյանի խուզարկու միտքը նորանոր թռիչքներ է կատարում, հրապարակախոսն անընդհատ ընդլայնում է իր մտահորիզոնը: Այդ են վկայում նաև Պետրոսյանի ամրոցում գրած Նալբանդյանի մի շարք փայլուն աշխատությունները: Հրապարակախոսը թույլտվություն է խնդրում և բանտում, շարունակում իր գրական դործունեությունը: Խիստ ուշադրավ է Նալբանդյանի դիմումի վրա երրորդ բաժանմունքի պետ Դուգորուկովի գրած հարցումը. «Խնչպես են վարվում Չերնիշևսկու երկերի հետ»: Չերնիշևսկուն ամբողջ թույլտվությունը հավանորեն տարածվեց նաև Նալբանդյանի վրա: Հրապարակախոսը բանտում գրեց Պերճ Պոռչյանի «Սոս և վարդիթեր վնայի կրիտիկան»: Սակայն դա հրապարակախոսի քննադատական առաջին երկը չէ: Նա քննադատական երկեր է գրել տակավին 1858—59 թվերին «Հյուսիսսիսայլ»-ում: Ստեփաննոս Նազարյանի «Հանդես նոր հայախոսության» կրիտիկան, Ռափայել Պատկանյանի թարգմանությունամբ լույս տեսած «Ռոբինզոնի պատմությունը» գրքի գրախոսությունը, «Ազգային թաւրոնը Պոլսի մեջ» Նալբանդյանի քննադատական անդրանիկ երկերն են: Քննադատական այդ առաջին փորձերի մեջ հրապարակախոսը ցուցաբերում է էսթետիկական նուրբ ճաշակ: Նրա կարծիքով քննադատությունը հսկայական նշանակություն ունի գրականության զարգացման համար: «Այն ազգը, որ չունի կրիտիկա, չունի և մատենագրություն», որովհետև «մատենագրությունն առանց կրիտիկայի միևնույն է, ինչպես մարմինն առանց հոգու» — գրում է Նալբանդյանը «Հանդես նոր հայախոսության» քննադատության մեջ:

1860—62 թվականներին իր ռեզուլտիտն և հրապարակախոսության ելուն գործունեության շրջանում Նալբանդյանը ժամանակ շունհր անդրադառնալու այդ հարցերին:

Գրական խնդիրներին նա կրկին վերադարձավ Պետրոպոլիտիկ բանտում: Հենց այդ տարիներին Նալբանդյանն աճել էր մեկ ամբողջ զլխով, հսկայական մտավոր թռիչք էր կատարել: Պերճ Պոռչյանի «Սոս և Վարդիթեր» վկայի քննադատության մեջ Նալբանդյանը շարադրում էր իր մատերիալիստական էսթետիկան, մատերիալիստորեն մեկնաբանում գրականության և գեղարվեստի հարցերը: Հրապարակախոսի կարծիքով գրականությունն ու գեղարվեստը մարդկային իմացության ճյուղեր են և արտացոլում են օրեկտիվ աշխարհը: Կրիտիկայի հեղինակը քննադատում է իդեալիստական էսթետիկայի բացարձակ գեղեցկության իդեալը: Նա նկատում է, որ արվեստը արտահայտում է կյանքը, ուստի գեղեցիկն արվեստի մեջ հարաբերական նշանակությունն է: «Գեղեցկության մոտավոր սահմանը բնության մոտ լինելը կամ բնության նմանին է ասացին. այստեղ բնությունն ուրեմն ստացավ դարձյալ շափի պաշտոնը», դրո՞ւմ է Նալբանդյանը «աշխարհաբարի բերականության» հատվածների մեջ: Եթե մարդկային իմացությունը «բնության արտացոլումն» է, ապա Նալբանդյանի կարծիքով գեղարվեստական երկի արժանիքը սահմանվում է նրանով, թե ուրքան հարադատորեն և ինչպիսի արվեստով է արտահայտված օրեկտիվ աշխարհի պատկերը: Նալբանդյանը միաժամանակ նկատում է, որ մարդկանց գեղարվեստական հասկացողությունները փոխվում են, «անցյալ տարվա գեղեցիկն այսօր տղեղ է լինում, իսկ այսօրվա գեղեցիկը՝ առաջիկա տարում»: Նկատելով երևույթը՝ նա այդ փոփոխության պատճառը որոնում է մարդկանց գիտակցության մեջ և դժվարանում է պարզել այդ փոփոխության հասարակական պատճառական պատճառները: Մատերիալիստական էսթետիկայի տեսանկյունից Նալբանդյանը քննադատում է Պերճ Պոռչյանի վկայը: Այդ երկի խոշոր առավելությունը նա համարում է ռեալիզմը: «Բայց բանաստեղծը, որտեղ ուղղակի խոսում է բնության լեզվով, ուր միայն լուր թարգման է լինում բնության և ստորադրում է այն, ինչ որ աշխարհում մարդ կարող էր տեսնել և ստուգել, հոյակապ արժանավորություն ունի», «նկարագրված բնավորու-

թյունքը ապշելի հարադատություն ունին»։ Բայց Նալբանդյանը նկատում է, որ երբ «արգո հեղինակը բնությունը թողնելով օգնություն է խնդրում հրեականությանից և հնարաստեղծում է անբնական բաներ, այնտեղ գործի արժեքը թուլանում է և անհամեմատ թուլանում է»։ Անբնական բաներ ասելով՝ Նալբանդյանը նկատի ունի հենց անճշմարտացի, ֆանտաստիկ հրեայությունը։ Որպես իսկական լուսավորիչ՝ Նալբանդյանն առաջնակարգ նշանակություն է տալիս երկի գաղափարական բովանդակությանը։ Նրա կարծիքով դեղարվեստական երկը մեծ առավելություն ունի, եթե պատկերում է հոսարակական կյանքը, իսկ «Սոս և Վարդիթեր»-ի մեջ «կյանքը հասարակաց է»։ Այդ համաձայնքը Նալբանդյանը համարում է վեպի խոշոր առավելությունը։ Հրապարակախոսի կարծիքով պատկերելով կյանքը՝ գրողն իր դարի առաջավոր գաղափարների թարգմանը պիտի հանդիսանա և պատմությունի ժամանակի հրատապ հարցերին։ Հենց այդ տեսակետից «Երիտիկայի» հեղինակը խիստ քննադատում է Պռոշյանի ֆատալիզմը։ Նա դրողից պահանջում է «...ցրվել միջնադարյան մառախուղը, բանալ ազգի աչքը և ավելի հավատ դնել նորա մեջ իր վրա, իր մարդկային արժանավորության և իր գործունեության վրա»։ Նալբանդյանն իրոք քննադատում է իդեալիստական էսթետիկայի հիմնական դրույթներից մեկը, ըստ որի մարդը ճակատագրի խաղալիքն է։ Նրա կարծիքով մարդը ինքը պետք է անօրինի իր ճակատագրից։ Հրապարակախոսը բեկումնային դեմոկրատ է նաև էսթետիկայի մեջ։ Գրականությունը ժողովրդի վարժողության կարևորագույն գործիքից մեկն է նրա համար, ուստի Նալբանդյանն իր և իր քաղաքական բարեկամների նվիրական պարտականությունն է համարում. «գեղաթափեր գործ դնել» և նախապատրաստել ժողովուրդը «խորհրդավոր ժամանակների համար»։ Կասկածից վեր է, որ եղևպոսյան լեզվով գրված այդ տողերի մեջ հրապարակախոսը հարգություն է իր քաղաքական բարեկամներին՝ շարունակել իրենց հիանալի գործը։ Նալբանդյանը Պռոշյանի վեպի առթիվ նորից անդրադառնում է գյուղացիական հարցին՝ «հարստահարված երկրագործի վիճակին», որ «բռնադատված էր լուռ մնալ իր հարստահարողների ընդդեմ»։ Վեպի պերսոնաժներից Սոսի եղբայր Արշամը քննադատում է հարստահարողներին։ Նալբանդյանը նկատում է, որ

նրա բերանով «խոսում է նոր ժամանակների որդին»։ Նա ափսոսում է, որ այդ «կենարար սկեպտիցիզմը, այն ուղղությունը, որ երևում է Արշամի մեջ», «շատ քիչ հանդես ունի» վեպում։ «Կրիտիկայի» հեղինակը հաջողություն և ընթացք է մատչում այդ ուղղության։ Նալբանդյանը ոչ միայն նշանավոր քննադատ է, այլև հայ առաջին մատերիալիստը։ Փիլիսոփայական մատերիալիզմը հրապարակախոսի ռեուլուցիոն աշխարհայացքի անկյունաքարն է, նրա ռեուլուցիոն եզրակացությունների հենակետը։ Հրապարակախոսը մատերիալիզմին ծանոթացել է Գերցենի և Չերնիշևսկու երկերից, իսկ Ֆոյերբախի «Քրիստոնեություն էությունը» աշխատությունը ծանոթացել է հավանորեն 1861 թվականին Լոնդոնում։ Հենց այդ թվականին Տրյուբների հրատարակությունը և Ֆլոդորովի թարգմանությունը լույս տեսավ «Քրիստոնեություն էությունը»։ Նալբանդյանը հավանորեն կարդացել էր ռուսերեն այդ թարգմանությունը։ «Երկրագործության» հայտնի էպիգրամը բերված է հենց այդ աշխատության այն հրատարակությունից, որից և կատարված է ռուսերեն թարգմանությունը։

«Կրիտիկան» այն երկն է, որ Նալբանդյանն ավելի հանգամանորեն և մեծ հստակությամբ շարադրում է փիլիսոփայական մատերիալիզմը։ «Մարդը, ոչ միայն ֆիզիկապես, այլև բարոյապես ենթակա է բնության ազդեցության. բնության սրտի զսրիլը ցուանում է անմիջապես մարդու սրտում։ Մարդը իր գաղափարքը առնում է բնությունից։ Ինչ չափով ճանաչել և ուսել է նա բնությունը, համեմատ այդ չափին կլինի նորա գաղափարների և հասկացողությանց ազնվությունը։ Ահա մի օրենք, որ բնավ բացառություն չունի», — կարդում ենք «Կրիտիկայի» էջերում։

Այդ նույն միտքը Նալբանդյանն արտահայտում է նաև «Հենրիկոս Թովմաս Բոքլի հիշատակին» ոտանավորի հետևյալ տողերում.

«Ոգին մարմինն է համեմատ,
Արդյունք բնության է մարմինը»
Բնության դարձավ ոգին հնազանդ,
Հոգս միասնիկի գլխին»

Նալբանդյանի փիլեոսոփայական աշխատությունը Հայմի

«Հեղեղը և նորա ժամանակը» գրքի բնագաղափարներն է։ Այդ գրվածքում հրապարակախոսը մատերիալիզմի դիրքերից բնագաղափարում է Հեղեղի իդեալիզմը։ Հոգիվածից երևում է, որ հեղինակը հիմնովին ծանոթ էր գերմանական փիլիսոփայության և կարդացել էր Ֆիխտեի, Շելլինգի, Հեգելի երկերը, ուսումնասիրել էր նաև Բեկոնի ու Դեկարտի աշխատությունները, ծանոթ էր և ֆրանսիական մատերիալիստներին ու լուսավորիչներին։ Մատերիալիստական փիլիսոփայության աղբյուրն ու պատվանդանը հրապարակախոսը համարում է ընդհանուր պատմությունն ու բնագիտությունը։ Ուստի նրա կարծիքով, գիտության դարգացումը հսկայական նորություն է բերում նաև փիլիսոփայությանը։ «Գիտությունը առաջ են դնում և նոցա ընթացքը զարմունալի կերպով լծորդված է իրար հետ։ Տեսաբանության մեջ մի ապակի է մտնում, քիմիայի մեջ մի տարր է ավելանում և ահա բովանդակ գիտությունը միահալույն վազում են առաջ»։ Իսկ դա պակաս նշանակություն չունեք նաև մատերիալիստական փիլիսոփայության համար։

Իբրև մատերիալիստ Նալբանդյանի համար առաջնայինը բնությունն է, մատերիան։

«Մարդն իր գաղափարքն առնում է բնությունից» և այդ «օրենքը բացառություն չունի», արոշակիորեն հայտարարում է Նալբանդյանը։

Նշենելով մատերիալիստական փիլիսոփայության այդ մեկնակետից՝ Նալբանդյանը օբեկտիվ աշխարհը միանգամայն ճանաչելի է համարում մարդկային իմացականության համար։ Ըստ Նալբանդյանի՝ դրանից է կախված գիտության առաջադիմությունը։ «Բնությունը մի գիրք է, որ պիտի կարդալ», գրում է Նալբանդյանը։ Մատերիալիզմը Նալբանդյանի համար այն ուսմունքն էր, որ իշենելով լուի անսակա՞ն աթոռից՝ ոտք էր կոխում իրականության պատվանդանի վրա։ Ուստի ֆոյբրբախյան մատերիալիզմի հայեցողությունը չէր բավարարում թե՛ Չերնիշևսկուն, թե՛ Նալբանդյանին։ Չերնիշևսկին և Նալբանդյանը կյանքի մարդիկ էին, իսկական ռեուլուցիոներներ։ Փիլիսոփայությունը պիտի պատասխաներ կյանքի հարցերին։ Նա պիտի լուսավորեր մարդկային ռեուլուցիոն պրակտիկան, փիլիսոփայությունը պիտի դառնար ոչ միայն կյանքը մեկնաբանելու, այլ այն վերափոխելու միջոց։

«Մարդը տուն չունի, մարդը հաց չունի, մարդը հանդերձ չունի, բնությունը իր առնելիքները կպահանջե, խոհեմ և բնական ճամփան, մարդասեր հնարներ, թե կարող ես գտնել, որ մարդը տուն գտնե, հաց ունենա, մերկությունը ծածկե, բնության պարտքերը հատուցանե, ահա այդ ճամփան և հնարներն են փիլիսոփայության խելությունը...», — դրոմ է հրապարակախոսը:

Ահա թե ինչու Նալբանդյանն իբրև մատերիալիստ, ծաղր ու ծանակի է ենթարկում ամեն մի վերացական միգապատ փիլիսոփայություն: «Փիլիսոփա պարոնները իրենց համակարգությունքը ճենց զրեղ են մեջտեղ որպես մի հավատալիք, որպես դոգմա. մենք ոչ թե ձեռնոց ենք նետում իմաստության, այլ այն ձեռն, և դատապարտում ենք նույն վարդապետությունը, որ հրեւում է որպես դոգմա»:

Հենց այդ մեկնակետից ելնելով, Նալբանդյանը ծաղրում էր գերմանական ֆիլիստերությունը. «Ընկած լինելով այդպիսի խեղճ վիճակի մեջ իրողապես, դերմանիկ ոգին իր ելքը աշխատեցամ փնտրել անպտուղ իդեալների մեջ և մինչև այսօր չպակասեցան բերանարաց փիլիսոփաներ, որ քամի կուլ տալով իդեա քարոզեցին, առանց այդ սքանչելի իդեա՞ն երբեիցե իրենց համար մարմնավորել կարողանալու»:

Քննադատելով Հեգելին մատերիալիզմի դիրքերից՝ Նալբանդյանը Չերնիշևսկու օրինակով «գիտության ընդհանուր ձևերի հայտնագործումը», այսինքն դիտելիտիկան համարում է գիտությանը մատուցած նրա մեծ ծառայությունը: Նալբանդյանը մեղքերում է Չերնիշևսկու «Փիլիսոփայական նախապաշարումների քննադատությունը համայնական հողատիրություն, դեմ» հոդվածը, լիովին համերաշխելով նրա հետ:

«Ոչ Հեգելի աշակերտ ենք և ոչ Շելլինգի, բայց արդարությունը ստիպում է խոստովանել, որ երկուսի համակարգությունքն էլ մեծ օգուտ ցույց տվին գիտության ընդհանուր ձևերը հայտնագործելով, որոնց միջնորդությամբ առաջ է գնում վարդացման գործողությունը: Այս հայտնագործությանց հիմնական արդյունքը երևում է հետևյալ առածի մեջ. «Ջարդացման վերին աստիճանը իր ձևով նման է սկզբին, որտեղից առաջ է գնում այդ զարգացումը»:

Նալբանդյանը փիլիսոփայությունը չի դիտում քաղաքակա-

հովիտներից անկախ: Նա տեսնում է պարտիաներ փխլիսոփայութ-
յան տապալակներ: Նա այս կամ այն փխլիսոփայի գաղափար-
ները բացատրում է նրա քաղաքական դիրքով: Իդեալիզմը Նալ-
բանդյանի համար ռեալիզմի փխլիսոփայություն է, իսկ մատե-
րիալիզմը՝ ռեալիզմի մտավոր զենքը. որ կործանում էր ճամնի
մի համակարգություն: Ուստի Հեգելի իդեալիզմը Նալբանդյանը
համարում է ռեալիզմի և դա բացատրում է Հեգելի քաղաքական
պահպանողականությամբ: Հեգելը վստահում էր ռեալիզմից,
որովհետև դա «ոչ միայն կործանում էր տերության համակարգու-
թյունը, այլև իդեալիզմի համակարգությունը», — գրում է Նալբանդ-
յանը»:

Պատմության սրուշ հարցերում, ինչպես օրինակ պետության
խնդրում՝ Նալբանդյանը հանդիմանում է պետության դատարարային
ըմբռնման գաղափարին: Խոսելով անդլիական պետության մա-
սին Նալբանդյանը չգտնում է. «Այդ տեսելով հասկացանք և հասկա-
նում ենք անդլիական հասարակության այն բաժինը, որ ուղղակի
կամ անուղղակի մասնակցի է կառավարության և որի պոլիտիկական
իրավունքը խոստովանում է անդլիական կոնստիտուցիոնը, որով-
հետև այդ կոնստիտուցիոնը հասարակապետական և ոչ հանրա-
օրենսական լինելով, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգնե-
րում, համարեն ազդի անձնուր անդամներին չէ տալիս պոլիտի-
կական իրավունք: Եվ կառավարության մեքինան շարժվում է
միմիայն առաջին և միջին պատկարների ուժով: Այդ երկու դա-
սակարդի շահին էլ ընդդեմ է Անգլիո մեք ման փոփոխություն,
որ կարող է շատ թե քիչ սասանեցնել կամ ավելի փոքր կանգ-
նեցնել բաների ամենօրվա ընթացքը: Եվ այդ երկու դասակարգե-
րուն ու պրական իշխանություն ունի իր ձևերին, ոչ օրենքը, ոչ
զրված կոնստիտուցիոնը և ոչ իսկ թագի արտոնությունը ազ-
դեցություն ունի նորա վրա: Նա փոխում է օրենքը, սրբազրում է
սահմանադրությունը, փոխում է և պահակալության հաջորդու-
թյունը...»:

Սակայն այնուամենայնիվ Նալբանդյանի իբրև նախամարք-
սյան մատերիալիզմի ներկայացուցիչ, չի գտնում կեցությունից
չեպի հասարակական դիտակցությունը տանող կամուրջը: Ճիշտ
որոշելով կեցության և դիտակցության փոխհարաբերության խըն-
դիրը՝ Նալբանդյանը սակայն ճիշտ չի որոշում հասարակական

կեցութեան և հասարակական դիտակցութեան փոխհարաբերութեանը: Օրինակ՝ գնահատելով բարոյականութիւնը, նա Ֆոյերբախի օրինակով կարծում է, թէ մարդկային հասարակութիւնը կարող է հենվել սիրո, որպէս ամենակարող զորութեան վրա: Հանգելով այն եզրակացութեան, որ հանցագործութեան հիմնական պատճառը հասարակական պայմաններն են, և պատիժը չի կարող կանխել այն, և որ պիտի փոխել հասարակական պայմանները, Նալբանդյանն այնուամենայնիվ մարդկային սերը համարում է բարոյականութեան հիմնաքարը:

«Եթէ սիրով ոգևորված ազգ ընկերութեան յուրաքանչյուր անդամը չէ նայում աչլա իր ընկերի վրա որպէս թշնամու, կամ կատաղի գազանի վրա, եթէ փոխանակ երկյուղի, որ ամենի օրտի մէջ ամրացած դադար չէր տալիս նոցա, տիրապետե խաղաղութիւնը հիմնվելով փոխադարձ հաշտտի վրա, որի գրավականը և աղբյուրը էր սերը, մի՞թէ ընկերութիւնը ալիւի երջանիկ չի լինիլ, վրեժխնդրութեան սկզբունքը ներդրութեան սկզբունքին դոհելով կամ հալածարարութիւնը (սպառժի և մահի մեջ!) սիրու զոհելով»: Այսպիսով բարոյականութեանը հիմնված մարդկային սիրո սկզբունքի վրա, դառնում է մի կատարյալ կատեգորիա, բոլոր ժամանակների համար: Ուստի և ոչ մի ժամանակի համար ճիշտ այդ նույն իդէալիզմը արտահայտվում է նաև կապիտալիզմի քննադատութեան ասպարեզում «երկրագործութեան» էջերում: Նալբանդյանը կապիտալիզմը համարում է ոչ թէ հասարակութեան պատմական զարգացման հետեանք և հանգում է նրա կործանման դադափարին՝ ուսումնասիրելով կապիտալիստական արտադրութեան եղանակը, այլ կապիտալիզմը դիտում է որպէս մի սխառն, որ բերում է յալածութեան և քննադատում է այդ դիրքերից, ու առաջարկում փոխարինել այն սոցիալիստական սխառնումի: Սակայն հենց որ խնդիրը վերաբերում է բաղադրական կյանքին, պետականութեան հարցերին, Նալբանդյանն իբրև ուղղութիւն-դեմոկրատ, հանգում է ճիշտ ուղղութիւն եզրակացութիւնների:

Միքայել Նալբանդյանը շարունակում էր պայքարել իր քաղաքական հակառակորդների դեմ: Նա կորցում էր ժամանակի մամուլը: Բանտում է գրված «Ազգային թշնամութիւն» նշանավոր հոգովածը, որ լույս տեսավ 1864 թ. «Հյուսիսստիպալ»-ում

Ստեփաննոս Նազարյանի ստորագրությամբ: Նալբանդյանն այդ հոգւածում անարգանքի սյունին է դամում հայ ռեակցիոներնե-
րին, որոնք հալածանք էին սկսել պոլսահայ դեմոկրատական
մամուլի, մասնավորապես Սվաճյանի «Մեղու»-ի դեմ: «Սահմա-
նադրական» («ազգային կառավարչութիւնը», ազգային բարե-
կարգութիւնն «սկսում» էր բռնությամբ, «փակում» էր «օրագիրնե-
րի բերանը» — դրո՞ւմ է «Ազգային թշնամութեան» հեղինակը:
Հենց այդ սահմանադրական կառավարչութիւնը խնդրում էր
սուլթանական կառավարական մարմիններին փակել «Մեղու»-ն:
Նալբանդյանը մեղադրում է սահմանադրական լիբերալներին,
որոնք ըստ էութեան ռեակցիայի թե ու թիկունք էին: Ազգային
սահմանադրութիւնն ըստ էութեան դարձել էր ազգային թշնամու-
թեան աղբյուր և հենց «մշակութիւն» հետո ուղղված էր ժողո-
վրդական դեմոկրատիայի դեմ:

Խորեն, Գալֆայանի «Վարդենիք» բանաստեղծութիւնների դեմ
Նալբանդյանը գրեց «Աղցմիք» հայտնի պոեմը, որ իր հակակրո-
նական բովանդակությամբ ու ձևով կատարելապես հիշեցնում է
Պուշկինի «Գալիլիլիադան» («Գարբիելականը») և անշուշտ բնու-
թագրում է Նալբանդյանին որպէս արեւմտ: Բանտում են գրված
նաև «Կայսրակ» անավարտ պոեմը և «Հենրիկոս Բովմաս Բոքի
հիշատակին» բանաստեղծութիւնը: Նալբանդյանը բանտում
թարգմանեց և կոմենտարներով օժտեց «Ղազար Փարպեցու
թուղթը»:

Հրապարակախոսն սկսեց մի մեծածավալ աշխատութիւն
«Հայոց աշխարհարար լեզվի համեմատական քերականութիւնը»,
որի համար օգտագործում էր Սայաթ-Նովային, Աբովյանի
«Վերք Հայաստանի» և Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» վեպերը:
Բայց հիվանդութեան պատճառով չկարողացաւ վերջացնել այդ
աշխատութիւնը, որ պիտի լինէր նրա գրական գործունեության
գլուխ գործոցներից մեկը:

Ժան-Ժակ Ռուսոյի հիշատակին բանտում գրված բանա-
ստեղծութեան մեջ մեծ կալանավորը պարզում էր աղատութեան
դրոշը և հետևյալ ոգեշունչ տողերի մեջ նկատի ունէր նաև
իրեն:

Բայց դու մենակ, մարդ քաջարի,

Միշտ անդդողդ, անսասան,

Կանգնած նման ապառաժի՝

Ձեռք պարզեցիր մարդկութեան:

Մո՛ւնր եմ գնում ես այդ քարին,
Ութսուն յոթը տարուց հետ՝
Քեզ պատվում է հայի որդին,
Նվ՛ նա՛ մա՛րդ է, վա՛րդապետ:

Միապետության դեմ ռեզոլուցիոն պայքարը շարունակելու հրապարակախոսի անհողդողդ կամքը արտահայտվում է նաև 1865 թ. իր ընկերոջ՝ Անանիա Սուլթանշահին դաղտնի ճանապարհով ուղարկած հետեւյալ երկտողում.

«Այս նամակս մի այլ ճանապարհով կստանաս: Տակավին ես այս խոնավ բերդում կմնամ 6—8 ամիս ամենաքիչը. բարբառոս կառավարությունն էլ չգիտե ինչ միջոց դործ դնել ազատ խոսքը բռնաբարելու և մեր պաղափարքը ոչնչացնելու նպատակով: Ինձ արգելված է հայոց լեզվով նամակներ գրել, պետք է գրեմ ռուսերեն, բացի այդ, նամակներս պետք է կարդամ կոմենդանտի առաջ. բարբարոսի արարքն է՛լ ծայր սահման շունին: Ի՞նչ նամակս հասնի ձեռքդ, գուցե այլ նամակներ գրեմ մանրամասն տեղեկություններով քո հարցրած և մեզ հետաքրքրած հարցերի մասին...

Միշտ քեզ սիրող
Բո Միխայել»

Թե ի՞նչ ճանապարհով էր նախնադրյանը այդ քարի դադաղից դուրս ուղարկել երկտողը, այդ կատարելապես մի հանելուկ է: Ըստ երևույթին նախնադրյանը նույն աղբյուրից ինֆորմացիա էր ստանում և լավատեղյակ էր արտաքին աշխարհի անց ու դարձին: Բերդում գրած հրապարակախոսի հողվածները վկայում են, որ նա լավատեղյակ էր իր ժամանակի քաղաքական իրադարձություններին: Զարմանալի չէ, որ թե՛ Պոլսի բարեկամները, թե՛ հայ արմատական ինտելիգենցիայի ներկայացուցիչները ինֆորմացիա ունեին կալանավորի վիճակի մասին:

Ցարական կառավարությունը 32-ի դատավարությանը խոշոր նշանակություն էր տալիս: Ահա թե ինչու այդ գործի քննությունը հանձնվեց սենատական հատուկ հանձնաժողովին՝ ցարական սատրապ Դալիցիինի գլխավորությամբ: Քննիչ հանձնաժողովի տրամադրության տակ էին նախնադրյանին հասցեագրված Բակունինի նամակները և դաղտնի հրահանգ բառարանը, Գերցենի,

և Օդարյովի նկարները, Պուշի բարեկամներից Սերսե Թագ-վորյանի նամակը, մի հայերեն ծածկագիր բառարան, «Նրկ-բագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքույկի օրինակ-ները, որ ուղարկել էր Վետոշնիկովի հետ Բախունինը խոհարարա-կան գրքի անվան տակ, Նալբանդյանի ծոցատետրի նկատողու-թյունները բաղմամբով հասցենեռով Այգ նյութերի հիման վրա քննիչ հանձնաժողովի համար գծվար չէր անշուշտ պարզել Մի-քայել Նալբանդյանի քաղաքական կապերը Լոնդոնի պրոպագան-դիստների հետ:

Հանձնաժողովն ուզում էր պարզել Նալբանդյանի դերը ռու-սական դեմոկրատական շարժման մեջ և ապա հայկական ազա-տագրական շարժման ծավալն ու քաղաքական կապերը: Նալբանդ-յանի քաղաքական գործունեությունը կապված էր անշուշտ Գերցենի և ոչ Բախունինի հետ, Նալբանդյանի ձեռքով գրված հայերեն հրա-հանգում, որպես կենտրոնական անձնավորություն, Նալբանդյանը նկատի ունի Գերցենին: Սննատական ցուցմունքների մեջ ևս Նալ-բանդյանը միշտ առաջին պլանում հիշատակում է Գերցենին: Քըն-նիչ հանձնաժողովն իր հերթին աշխատում էր պարզել Նալբանդյանի կապերը Գերցենի հետ: Ինքը Բախունինը 1862 թ. իր բարեկամնե-րից մեկին գրած նամակում որոշակիորեն հայտնում է, որ Նալ-բանդյանը «Քաղաքական ոչ մի համերաշխություն չունի ինձ հետ»: «Նրկրագործությունը» լիովին ապացուցում է այդ: Ուստի միանգամայն անհիմն են Սիքայել Նալբանդյանին Բախունինի հետ կապելու որոշ բանասերների փորձերը:

Նալբանդյանի քաղաքական գործունեությունը ապացուցելու ջանքերը ապարդյուն անցան, նա փախչում կերպով պաշտպանեց իրեն և հյուսեց մի ամբողջ միամիտ պատմություն՝ կապելով իր Արևմտյան Նվրոսայում կատարած ուղևորությունը հնդկահայ կտակների հետ: Իսկ Գերցենի հետ ունեցած ծանոթությունը բա-ցաարում էր լոկ պատահականությամբ: Բախունինի նամակները և դրագրությունը բացատրում էր նրա կնոջ Նվրոսա փոխադրվելու հարցի հետ և ժխտում էր իր քաղաքական կապերը: Հրապարա-կախուսը ցույց տվեց ռևոլուցիոն մեծ արիություն և ոչինչ չհայտ-նեց քննիչ հանձնաժողովին, թեև մեղադրյալներից նիշիպորենկոն «մատնում էր ամենքին և ամեն ինչ», գրում է Տուրգենևը 1863 թվի նամակներից մեկում: Նա խոսում էր նաև Նալբանդյանի կապերի

մասին և նրան դնում էր ծանր կացութեան մեջ: Այնուամենայնիվ սկսնաւորական հանձնաժողովը չկարողացաւ պարզել Նալբանդյանի քաղաքական գործունեութեանը Հանձնաժողովի ուշադրութեանը վերաբերեալ ամենակարեւոր փաստաթուղթը՝ «Երկրագործութեանը», որի բովանդակութեանը ծանոթ էր հանձնաժողովին չինովնիկ Ասկարխանովի թարգմանութեամբ: Սակայն «Երկրագործութեանը» գիտւում էր որպէս Նալբանդյանին ուղարկւած մի ռուսացիոն գրքուկ: Քննիչ հանձնաժողովին անհայտ մնաց, որ Սիմեոն Մանիկյանի անվան տակ թաքնւած էր ինքը Միքայել Նալբանդյանը: Այլ կերպ դատարարութեանն ուրիշ ընթացք կատարաւ: Այնուամենայնիվ պարզւած համարելով Նալբանդյանի քաղաքական կապերը Գեղեցիկի և ռուս ռուսացիոն վտարանդիների հետ՝ 1865 թ. ապրիլի 7-ին սկսաւոր հայտնեց Նալբանդյանին պետական խորհրդի որոշումը, ըստ որի Լոնդոնի պրոպագանդիստների գիտավորութեաններին տեղակ լինելու, նրանց օժանդակելու, նրանց հրատարակութեանները Ռուսաստանում տարածելու և Ռուսաստանի հարավում ապրող հայերի մեջ հակակռօնավարական շարժումներ տարածելու համար նա արքայութեան էր Ռուսաստանի հեռավոր քաղաքներէն մեկը՝ ոստիկանական խիստ հսկողութեան տակ:

Նալբանդյանն արքայութեան Կամիշին և առնվեց խիստ հսկողութեան տակ: Ելլորը դրած 1865 թ. 15 դեկտ. (3 հունվար) նամակում Նալբանդյանը ասում է. «Ամսիս 7-ին մտա Կամիշին առավել մեռած, քան թէ կենդանի»:

1866 թ. մարտի 31-ին Նալբանդյանը մեռաւ այդ արքայութեանը: Հայրապետյանը և Նալբանդյանի եղբայրները հանդուցալի դիակը փոխադրեցին Նոր-Նախիջևան: Ղազարոս եղբայրը Նալբանդյանին գտաւ գեռ կենդանի՝ նրա կյանքի վերջին ժամերին: Յարական կառավարութեանը վտանգավոր էր համարում նաև կարմիր հատարակապետականի դիակը և դադարին ուղեկցում էր ժանդարմական կապիտանը: Նալբանդյանի թաղումը վերածվեց ժողովրդական մեծ ցուցի: Ուշագրաւ է, որ նրա դագաղը Հայրապետյանի նաւահանգստից մինչև Նալբանդյանի տունը տարվեց կարմիր կտորի վրայով: Խալիբյանի դանոսի հիման վրա ոստիկանութեանը խուզարկութեաններ կատարեց Նալբանդյանի բարեկամների տներում: Անշուշտ այդ է պատճառը, որ ոմանք ոչնչացրել են նաև Նալբանդյանի բազմաթիւ ձեռագրերը:

Միքայել Նալբանդյանը 60-ական թվականներին հիմք դրեց հայ ռեզուցիոն-դեմոկրատական շարժման և մեր ժողովրդի բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի և ռուսական ռեզուցիայի հաղթանակի հետ:

Նալբանդյանի երազներն իրականացան:

Միքայել Նալբանդյանը թե՛ իր ռեզուցիոն գործունեությամբ, թե՛ իր գրական ժառանգությամբ, պատկանում է մեզ:

Լենինը Չերնիշևսկուն անվանում է ռուս ռեզուցիոն սոցիալ-դեմոկրատիայի նախորդը: Այս գնահատականը հավասարապես վերաբերում է և Նալբանդյանին:

Հիշատակարաններից մեկում խոսելով իր և իր բարեկամների մասին՝ Նալբանդյանը գրում է. «Ճշմարտության ղինվորների և նոցա առաջնորդի անունները, վառվռուն աստղերի նման, փայլելու են մշտնջենավոր ժամանակով դալոց հայկական սերնդի աչքի առաջ, նորա ժամանակակից պատմությամբ հորիզոնի վերա»:

Հայկական ռեզուցիոնների և մեծ մտածողի մահվանից անցել է 83 տարի, բայց նրա աստղը ավելի ու ավելի պայծառ է փայլում մեր երկնակամարի վրա և մեր ազատ ժողովուրդը, որ ապրում է Ստալինյան երջանիկ դարաշրջանում, սիրով և երախտագիտությամբ է հիշում իր մեծ որդուն, որ կռվեց և մեռավ հասարակ ժողովրդի ազատության համար:



Պատ. խմբագիր՝ ԷԴ. ԹՈՓՉՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Կ. ՂԱՄՐԱՐՅԱՆ

Կոմտեղ սերագրիչ՝ Ա. ՉՈՒԱԽՅԱՆ

ՎՖ 02323. Պատվեր 1400. Տիրաժ 3000. Տպագրական 4,5 ժամով.

Հայպոլիգրոֆհրատի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65, 1949 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032153

[204]

94.11.2.11.

